Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

2-3(677-678)
25.02.2023
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ ● Lusarar

ՊԱՅՔԱՐԻ ԴՐՈՇՆ ԻԲՐԵՎ ՆԻՉԱԿ ԱՌԱՋ ՊԱՐՉԱԾ

Վերջին երեք ու կես տասնամյակների ընթացքում փետրվարը արցախցիների և, առհասարակ, աշխարհասփյուռ հայության համար ունեցել է ազգային զարթոնքի խորհուրդ, որի առանցքում միասնության գաղափարն էր: Այդ գաղափարով առնվազն մի ամբողջ սերունդ է դաստիարակվել, և այդ ոգեկոչմամբ են կազմվել ապագայի լավատեսական ծրագրերը: 2020 թվականի աշնանային պատերազմը, ցավոք, մեր ընթացքի հունը փոխեց՝ չկանխատեսված աղետներ բերելով հայ ժողովրդին, և այս համատեքստում երբեմն հոռետեսական այսպիսի հարց է հնչում՝ արդյո՞ք փետրվարի ոգեշնչող խորհուրդն այլևս արդիական չէ:

Միանշանակ ասենք՝ այն միշտ էլ արդիական է:

Արցախյան շարժման 35-ամյակին նվիրված տարաբնույթ միջոցառումները թեպետ համեստ էին նախորդ տարիներին անցկացված նմանատիպ միջոցառումների համեմատ, սակայն, դրանց նշանակությունը դժվար է գերագնահատել: Անկասկած, Արցախում ստեղծված հումանիտար ծանր վիճակը՝ կապված տնական շրջափակման հետ, տոնականության մոտիվացիա չունի, բայց ազգային միասնության գաղափարը ակնհայտորեն արթուն է մեր համոզմունքներում: Եվ դա առաջին հերթին գոյաբանական խնդրի համընկալումն է, հնարավոր նոր աղետներին դիմագրավելու պատրաստակամությունը: Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում փետրվարի 20-ին կազմակերպված ազգային պարերի ինքնաբուխ կազմակերպումը ևս մեկ անգամ վկայում է, որ մենք այս հողի վրա կանք, կլինենք ու կշարունակենք պայքարել հանուն այն սուրբ պատգամների, որոնք ստացել ենք Արցախյան գոյապայքարի ընթացքում՝ սկսած 88-յան հանրահավաքներից մինչև 44-օրյա պատերազմ: Մեր իրականության մեջ արձանագրված ռազմաքաղաքական իրադարձությունները շաղկապված են մեկ նպատակադրությամբ՝ հասնել Արցախի Հանրապետության ազատ և անկախ գոյության միջազգային ճանաչմանը: Հասնել՝ գիտակցելով, որ հիրավի՛ «փշոտ է ազատության ճանապարհը», և որ դա հենց փետրվարի անբեկանելի խորհուրդն է:

Նորօրյա մարտահրավերների առաջնաշարքում Արցախը հայաշունչ պահելու խնդիրն է, իսկ հայաշունչ պահել՝ նշանակում է ապրել և արարել Արցախում: Այս հարցում այլընտրանք չունենք. 2022 թվականի դեկտեմբերի 12-ից կենսակերպ դարձած դաժան պաշարումը հաղթահարելը, հատկապես խստաշունչ ձմռան պայմաններում, ոչ միայն հաստատում է արցախցիներիս վճռականությունը, այլև շեշտում է մեր դիմադրողական մեծ ուժը: Իսկ ոգու և մարմնի վիթխարի ուժով օժտվածները միշտ էլ հաղթանակներ են կռում, հրաշքներ գործում, հիացնում բարեկամին ու սարսափեցնում թշնամուն: Մենք, այո, օժտված ենք առասպելական կենսուժով, ասել է թե՝ մեր պատմության էջերն անպայման հերոսական նոր դրվագներով կհամալրվեն, և Վերածննդի հրապարակում ուս ուսի տված՝ դարձյալ հաղթապարեր կպարենք՝ 88-ի պայքարի դրոշն իբրև նիզակ առաջ պարզած:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՄԱՅՐԵՆԻՆ՝ ԻԲՐԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԶԵՆՔ

Ամեն տարի փետրվարի 21-ին մենք առանձնահատուկ կարևորությամբ նշում ենք Մայրենիի օրը, և դա պատահական չէ: Մայրենի լեզուն Արցախում ոչ միայն ազգային ինքնության գործոն է, այլև մարտերում փորձված զինատեսակ, որով դարեր շարունակ կռվել ենք ու պահպանել մեր հայկականությունը:

Դա լավագույնս դրսևորվել է նաև խորհրդային տարիներին, երբ «կարմիր մանգաղով» Ադրբեջանին բռնակցված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը ստիպված էր դիմագրավել պարտադրյալ ուծացմանը: Ազգային ինքնության պահպանումը հսկայածավալ մի կայսրությունում, որտեղ պետական լեզուն ռուսերենն էր, այն էլ մեկ ուրիշ ազգային հանրապետության կազմում, իսկական հերոսություն էր: Թեպետ Ադրբեջանական ԽՍՀ սահմանադրության մեջ ԼՂԻՄ-ում որպես երկրորդ լեզու նշվում էր նաև «մեծամասնության լեզուն», (տվյալ դեպքում կարելի է հասկանալ հայերենը), սակայն Խորհրդային Միության մայրամուտին և դրանից ավելի վաղ՝ մի որոշակի ժամանակահատվածում ադրբեջաներենը մտցված էր Արցախի դպրոցական ծրագրերի ցանկում:

Հայաբնակ մարզը ոչ միայն վարչականորեն դուրս էր գտնվում իր մայր հայրենիքից, այլև զրկված էր նրա հետ հոգևոր շփումների հնարավորությունից: ԼՂԻՄ-ում հասանելի չէին հայկական հեռուստատեսային և ռադիոհաղորդումները, Երևանում հրատարակվող հայատառ գրականությունը դժվարությամբ էր Ստեփանակերտ հասնում: Արհեստականորեն կտրված էր այն պորտալարը, որով Արցախը պետք է սնվեր ազգային արժեքներով, ինտեգրվեր հոգևոր-մշակութային ու կրթագիտական բնագավառներում տեղի ունեցող գործընթացներին: Այդ պայմաններում ԼՂԻՄ-ը հայկական պահող հիմնական գործիքը, բնականաբար, մայրենի լեզուն էր:

Նկատենք, հայեցիության պահպանման յուրօրինակ ամրոցներ էին այն ժամանակվա մարզային ռադիոն, «Խորհրդային Ղարաբաղ» թերթը, շրջանային թերթերը և, անշուշտ, պետական դրամատիկական թատրոնը: Դրանց միջոցով արցախցին հնարավորինս ծանոթանում էր հայկական մշակույթի, արվեստի, գիտության և այլ բնագավառների նորություններին, դաստիարակվում էր հայեցի, ինքն անձամբ դառնում հայ հոգևոր բերդատան տաշած մի քարը:

Եթե կենցաղում խոսակցական լեզուն Արցախի «ժայռակոփ» բարբառն էր, ապա հիմնարկներում, եթե այլազգիության պարագան չկար կամ էլ ուղղաձիգ հաշվետվության փաստաթուղթ չէր կազմվում, գրագրությունը տարվում էր հայերեն լեզվով: Եվ դա արվում էր համընդհանուր հպարտությամբ ու պատասխանատվությամբ: Արցախահայը գուրգուրանքով էր վերաբերվում մայրենի լեզվին՝ գիտակցելով, որ դա է իր մշտագոյության անփոփոխ պայմանը:

Այսօր էլ հայերենը Արցախի Հանրապետության համար լուրջ կռվան է քաղաքական բանակցություններում, պատմամշակութային բանավեճերում, իրավական քննարկումներում: Այս իմաստով մայրենիի հանդեպ մեր պատկառանքը գոյաբանական նշանակություն ունի: Գնահատենք մայրենին ո՛չ միայն օրացուցային շեշտումներով, փայփայենք ու պահպանենք հանգույն այն ինքնապաշտպանական զենքի, որ դատապարտված ենք միշտ ունենալ բոլորիս օջախներում:

Դա ժամանակի ուղղակի հրամանն է: Եվ ինչպես հրացանի մեջ վառոդն ենք չոր պահում, հայոց լեզվի մեջ ամեն տառ ու հնչյուն ևս պետք է վառոդի զորություն ունենա:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՄՈՒՐ ՓԱՐՎԵՆՔ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԱՅՄԻՆ

ԱՀ ԿԳՄՍ նախարարության աշխատակազմի Լեզվի տեսչության նախաձեռնությամբ փետրվարի 21-ին Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում կազմակերպվեց միջոցառում՝ նվիրված Մայրենիի միջազգային օրվան:

Մասնակիցները Արցախի հանրակրթական ուսումնական հաստատությունների 1-9-րդ դասարանների աշակերտներն էին: Ներկա էին ԱՀ ԿԳՄՍ նախարարի պաշտոնակատար Հասմիկ Մինասյանը, համակարգի աշխատողներ:

Լեզվի տեսչության պետ Արտակ Ղուլյանը, ողջունելով ներկաներին, նշեց, որ ամեն տարի հանրակրթական հաստատությունների հետ համատեղ կազմակերպվում են Մայրենիի օրվան նվիրված միջոցառումներ, իսկ այս տարի փորձել են այն վերածել մրցույթի:

Ա. Ղուլյանը շնորհակալություն հայտնեց Ստեփանակերտի քաղաքապետարանի և շրջվարչակազմերի կրթության բաժինների վարիչներին, հանրակրթական դպրոցների տնօրեններին, կազմակերպիչներին, հայոց լեզվի և գրականության ուսուցիչներին և, իհարկե, աշակերտներին, որոնք միանգամից արձագանքել են Լեզվի տեսչության կոչին և, չընկրկելով թշնամու կողմից Արցախի շրջափակմամբ ստեղծված դժվարությունների առաջ, հավուր պատշաճի ներկայացել են միջոցառմանը:

Լեզվի տեսչության պետը հիշեցրեց օրվա խորհրդի հետ կապված պատմությունը:

1947 թվականին Հնդկաստանի մի մեծ նահանգ փորձեց անջատվել ու դառնալ առանձին պետություն: Դա ներկայիս Պակիստան պետությունն էր: 1948թ. Պակիստանը հռչակվեց պետություն, բայց այդ պետության մեջ կային երկու խոշոր տարածաշրջաններ, որոնք իրարից կտրուկ տարբերվում էին մշակույթով և լեզվով. արևմտյան Պակիստանում իշխում էր ուրդու լեզուն, արևելյանում՝ բենգալերենը: Չնայած բենգալերենը միլիոնավոր մարդկանց մայրենի լեզուն էր, սակայն 1948 թվականին Պակիստանի կառավարությունն ամբողջ երկրի համար պետական լեզու է հռչակում ուրդուն: Դա բնականաբար առաջացրեց բենգալերեն խոսողների արդարացի դժգոհությանը: Նրանք դուրս եկան ցույցերի՝ բողոքելու իրենց լեզվի իրավունքի համար: Պակիստանի կառավարությունը փորձեց լռեցնել այդ ցույցերը ձերբակալություններով ու խոշտանգումներով: Ընդվզումները տևեցին մինչև 1952 թվականը: Նույն թվականին այդ ընդհարումների ժամանակ Դաքքա քաղաքում զոհվեց 5 երիտասարդ: Զոհվեցին լեզվի համար: Մի քանիսն էլ վիրավորվեցին: Չորս տարի մարդիկ պայքարում էին իրենց լեզվի համար: Եվ 1956թ. Պակիստանի կառավարությունը, տեսնելով, որ չի կարողանում խաղաղեցնել մարդկանց, լեզվի համար պայքարը տարիներով շարունակվում է, երկրորդ պետական լեզու է ընդունում բենգալերենը: Բայց արդեն ուշ էր, որովհետև լեզվի համար մղվող պայքարը վերածվել էր ազգային ինքնորոշման պայքարի, և դա այնքան է սրվում, որ 1971 թվականին աշխարհի քաղաքական քարտեզի վրա առաջանում է մի նոր պետություն Բանգլադեշ անունով: Այսինքն՝ այսօր այդ պետությունը կա՝ շնորհիվ լեզվի:

Բոլորս գիտենք՝ ինչ է լեզուն հայ մարդու համար: Դարեր շարունակ այն մեր կորսված պետականությանը փոխարինող միջոց էր: Չլիներ հայոց լեզուն, գուցե և չհասնեինք մինչև մեր օրերը որպես ազգ: Այսօր էլ՝ լուսավոր կոչվող 21-րդ դաժան դարում, երբ նորից կանգնած ենք պետականության կորստյան վտանգի առաջ, դարձյալ խիստ կարիք կա կառչել մայրենիին՝ որպես փրկության կայմի: «Մենք տեսնում ենք, որ այսօր հայ մարդն ավելի լավ է գիտակցում մայրենիի դերն իր կյանքում, հատկապես՝ շրջափակված Արցախում և առավելապես՝ հետպատերազմյան շրջանում»,- ասաց Ա. Ղուլյանը:

☞ 3

ԷՍՍԵ

ՀԱՅՐԵՆԻՔՆ ՈՒ ՏՈՒՆԸ ԱՆՏԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՆ ԱՎԵՐՎՈՒՄ, ԿՈՐՍՎՈՒՄ... ԺԱՄԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՈՎ...

Պայքարը ազգային ինքնության, ազգային դիմագծի, պետականության պահպանման, Հայոց Եռագույնի հավերժական ծածանման, ժողովուրդների, ազգերի հավերժական երթի պահպանման, անվիճելի արժեքների ձեռքբերման համար մեր գործունեության միակ ճիշտ, աներկբա, անթեք ու անխաչմերուկ, ուղիղ ճանապարհն է, մեր կյանքի, հայիս կյանքի իմաստն ու մաքառումը, որի վկան են արդեն քանի հարյուր դար ու դարեր, մեր հազարամյա հայոց պատմությունը:

Ու ամեն անգամ պատմության բարդ խաչուղիներում, երբ ազատության ու անկախության շունչն ու բառն է ելել հայի շուրթերից՝ քար ու մահակը, սուրն ու յաթաղանը, սպանդն ու ջարդն են եղել նրան ի պատասխան... Մաքառումի ժամանակների հոլովույթում մարեցին, իրար հաջորդելով իրար ետևից մարեցին հայրենիքիս լույսերը՝ Արևմուտքից-Արևելք, մարեցին ճրագները հայոց շեն ու բոլ քաղաքների ու գյուղերի, դատարկվեց, ավերվեց հայրենիքս Արևմտյան... Էրգիրը, Մեծ Էրգիրը մեր, որ մեր սերնդի համար կարծես անշոշափելի է, անտեսանելի, աներևույթ, աներևակայական, թերևս իր զորեղ պատմական հուշամատյանով, խոսուն հիշատակություններով և դեռևս խոսողավերակ սրբակոթողներով...

Ազգային ողբն ավելի ընկալելի, պատկերավոր ու ցավեցնող է, երբ հոգով ու մարմնով ես ապրում այն ամենը, թե ինչպես հայոց հորովելն ու Երգը, այն Երգը, Բառն ու Բանը, Ձայնը Հայոց, որ զրնգում էին Հայոց լեռներում, Մուշի դաշտերում, Վանի հայակերտ շեն բերդից, Կարինի սարերից, այն Երգն ու Կանչը, որ աղաղակում էին և՝ էն, որ հայի երկիր է ՍԱ, որ այստեղ հայերեն էին շրշում քամիները, որ հայոց մայրերի օրորոցայինով էին հագեցած էրգրի կիրճերն ու ձորերը, ռանչպար ու մտավորական հազարավոր հայերի օջախները, որ արտերում հնձվող հասկերն աճել, հաց են դարձել հայոց մանկանց երգ- խաղիկով, էլի՝...անվերջակետ ու անվերջանալի հայի..., հայի..., հայի...

Եվ այդ հազարամյա հային սպանած, նրա օրորոցը ջարդած ու պղծած քոչվորի քարն ու մահակը, սուրը գործի դրվեցին մեր դեմ, մեր աչքի առաջ, մեր զավակների, մեր տների ու օջախների, հայերեն բուրող մեր ճրագները մարելու այստեղ, մեր Հայոց Արևելից տանը...

Թվում էր, կարծում էինք՝ հզոր ենք, ամրակուռ, անկոտրում, և չէր թվում, նվիրյալները շատ էին, այդպիսին էին նրանք, որոնցից շատերը այլևս չկան...

Գուժկան ողբն ու իրականությունը, իր ցավեցնող, սպանող շոշափուկներով ոճիրը հասավ և մեզ... Մենակ լինեինք, մենամարտ լիներ, հավասար մարտում դեմ-հանդիման, մենամարտ՝ այո, մենք ուժեղ էինք և մենք կհաղթեինք... Բայց ազերի-թուրքը միայնակ չհամարձակվեց մենամարտել, մշտապես իր մտքի, բազկի ուժով հազար տարիների պատմություն կերտած միայնակ Հայի հետ...

...Ե՛ս, ե՛ս եմ վկան ու ականատեսը թշնամու այն չարագույժ «Օղակ», խարդախ, մարտական գործողությանն ու պետականորեն իրականացված ծրագրի, որի արդյունքում դատարկվեց Արևելյան երկիրն իմ՝ Ուտիքը, Գարդմանաց երկիրն իր շեն գյուղերով, Շահումյանն իր գյուղերով՝ Գյուլիստան պատմական բերդին թիկնած, զորավարների հայրենիքը Գագ ամրոցին հենված և քանի՜-քանի հայկական տուն ու օջախ...

Ե՛ս, ես եմ վկան ու ականատեսը Գանձակ գետի ձախ ափին ծավալված հայոց Գանձակ քաղաքի՝ իր վեհաշուք ժամով, հայոց դպրանոցներով...

Ե՛ս, ես եմ վկան ու ականատեսը պատմական այն ոչ վաղեմի իրողության և ճշմարտության, որ Մեծ, շատ Մեծ էր Իմ Հայաստանը Արևմուտքում և թե՛ Արևելքում՝ մինչև Նուխի ու Շամախի... Հիմա ես, դուք, և առավել՝ Նոր Սերունդը ո՞ւմ հավատա, թուրք զեղծարարությանն ու կեղծիքի՞ն, թե՞ Իմ տեսած, իմ ապ ու պապի տեսած ու ապրած հայրենիքին...

Իմ նորաթո՛ւխ սերունդ, երբեք, երբե՛ք, լսո՞ւմ ես, երբեք մտքովդ անգամ կասկածի տակ չդնես հայրենների քո սահմանները, սովորի՛ր, շատ և խորությամբ սովորիր քո ժողովրդի պատմությունը, որ այն չանթեղվի ոչնչացնող մարդ ասած սամումի ու փոշու ուժգնությունից...

Ես, Ե՛ս եմ վկան ու ականատեսը Դիզափայտին թիկնած իմ հայրական՝ այսօր որպես ավերակների կույտ ազերու ոտնատակին, իմ հայրական գյուղի, նրա քարակերտ ու գեղեցիկ տների ու մարդկանց ողբալի վերջաբանի...

Եվ ո՞վ, ո՜վ է հիշելու, հիշատակելու, որ մեծ կալվածքների տեր գյուղ է եղել իմ գողտրիկ, ժամանակի մեջ փոքրացած, բայց մեծածավալ հանդ ու տարածքների տեր իմ գյուղը, որ կոչվել է Զրաբերդ (Մյուլքուդարա), այո՛, և իսկն իր տերն իր անվան՝ Կալվածքների Ջոր... Եվ շատ քիչ հեռավորության վրա գտնվող շրջակա, Առաքել, Ծամծոր, Քարագլուխ. Խանձաձոր, Ջիլան, գյուղերի համար պատուհաս դարձած, ընդամենը հինգ-վեց խաշնարած ազերու ընտանիքից կազմված Մազրա կացարան գյուղը... Նրանք ժամանակին հարավից եկել, իրենց հոտն ու նախիրն են բարձրացրել արոտներ, ապա բույն (բներ) դրել, վրանները փոխել ծղոտե-խրճիթ կացարաններով, հետո նաև ամուր ոտնահող ունենալով՝ բարձրացել են քարե տները: Այդպես էր ժամանակների մեջ ողջ Հայաստան-Արցախ աշխարհում. թաթար-ազերիների բները աճում էին սնկերի պես. պետական ծրագիր, որին հետամուտ էին նրանց բոլոր իշխանությունները: Նրանց երեխաները մշտապես գրպանները լցրած էին պահում քարերով /այդպիսին էր տպավորությունը/, ու եթե հանկարծ համարձակվեինք ոտքով անցնել նրանց կողքով, մի վարկյանում ծակուծուկերից դուրս էին գալիս և սկսում քարկոծումը: Այդպես եղավ նաև 2012 թվականին Կարսի Բերդի տակ՝ Եղիշե Չարենցի ավերակված տան մոտ, այդպիսի «ինտերնացիոնալ» դրվագի ականատեսը դարձա դեռևս 1978թ. Բաքու-Երևան գնացքի մեջ, երբ գնացքի կարգավարը մեզ հորդորեց պատուհաններից հեռու մնալ, երբ անցնում էինք խորհրդային Հայաստանի, Մայր Հայաստանի Մասիսի շրջանի ադրբեջանական գյուղերով, և իրոք, եղավ քարկոծումը, և այդքանը խորհրդային «ինտերնացիոնալիզմի» «խիստ» օրինականության ժամանակ, և այդքանը՝ Հայաստանի տարածքում... Թերևս գնացքում մեզ հետ գտնվող համալսարանական ազերի երիտասարդ տղան ու աղջիկը թվում էին պարկեշտ ու հավաքված: Իսկ այսօր. ո՛վ գիտի, թե ինչպես են գործում և մտածում... Ազգային ատելությունը հայերիս հանդեպ նրանց համար օրինաչափություն էր, ու նրանց այդ «օրինաչափությունից» է ծնվել «Մահակը միշտ ձեռքիդ պահիր, ով հայ մարդ.» խորախորհուրդ խոսքը: Այդպես էր: Ժամանակների մեջ Հայաստան-Արցախ աշխարհում թաթար-թուրքի բներն աճում էին սնկերի պես. դա ծրագիր էր, որին հետամուտ էին նրանց բոլոր իշխանությունները այնօր և այսօր:

...Մտքերս ասում, գրում, ձեզ՝ ընթերցողներին, նոր սերնդին են փոխանցում, աղաչանքով խնդրում. «Գալի՛ք սերունդներ, չխաբվե՛ք հանկարծ թաթար-ազերու շինծու, կեղծ պատմություններից, լա՛վ սերտեք, լա՛վ ճանաչեք մեր հայրենիքն իր բնական սահմաններով և ոչ միայն պատմական սահմանները, գոնե մինչև ոչ վաղ անցյալ՝ գետնի վրա իրական հայերենով շնչող և ընդամենը վերջին 30 տարիների ընթացքում (1991թ. Օղակ-2020թ. Աղետալի պատերազմ) բռնի կերպով, ինքնաձիգի և տանկերի սպառնալիքով դատարկված մեր հարազատ գյուղերը, մեր հարազատների, մեր ծնողների աչքի առաջ. տանտերերը չէին հասցնում իրենց տներից, իրենց ստեղծած գոնե շարժական գույքը վերցնել, թաթար թալանչիները նրանց աչքի առաջ թալանում, ջարդում էին ամեն ինչ:

Թալանվեցին, ավերակվեցին, մեր հարազատ տներն ու օջախները, իմ հայրական երկհարկանի մեծ տան բանալիների ծանր խուրձը մորս ձեռքերում՝ վերադառնալու հույսով, դուռ ու դարպաս կողպելով դուրս եկան, իսկ երբ գյուղ տանող վերջին ոլորանից ետ նայեցին, գյուղի տները կրակների մեջ էին, այն գյուղի, որ թշնամու՝ չարորակ ուռուցքի պես տարածվող շոշափուկներից (ինչպես օձի բներից ճտերն են տարածվում, սողում-սողոսկում) պաշտպանվելու համար, անվտանգությամբ պայմանավորված, ժամանակների մեջ քանի՜ անգամ գյուղատեղիներ են փոխել՝ Երէ շինատեղ, Ներքէ շինատեղ» (գերեզմանները վկա), և ով գիտի՝ քանի հարյուր տարի առաջ տեղակայվել իր այսօրվա տեղում՝ գեղեցիկ սարերի ու բլուրների արանքում, որ պետք է նմանեցնել անմատչելի, անառիկ մի դար ու կիրճի՝ Երէ ու Ներքէ կապերի արանքում: Մարդիկ հազիվ մեկ ճանապարհ էին կարողացել բացել ժայռերի միջով դեպի գյուղ:

Գրում, հիշատակում և խնդրում եմ բոլոր հայերին, ապրողներին, գալիք ծնվողներին. այլևս ոչ ոք իր մտքի ծայրով անգամ չմտորի օջախից, տնից դուրս գալու մասին: Ամեն հայ պիտի մնա իր հայրենի տանը, հզորանա իր պատերի ներսում և մեծ պատմավիպասանին ունկնդիր՝ վագրի հզորությամբ, անսպասելի ու անակնկալ մարտնչի իրեն վնասողի դեմ և հաղթի՛:

Մեր ժողովրդի վերջին հարյուր տարվա պատմությունը երևի թե բավարար չափով ուսումնասիրելով և համադրելով այսօրվա դաժան իրողության հետ՝ իմ համոզմունքն ու տեսակետը մեկն է՝ անկախ ամեն ինչից չթողնել հայրենիքը: ՉԹՈՂՆԵԼ ՀԱՅՐԵՆԻՔԸ անտեր...

Հայրենիքը սիրել, նրան նվիրվել ոչ թե խրոխտ ու գեղեցիկ բառերով, կարգախոսներով, անգամ հեռվից հղվող տեղի-անտեղի դիտողություններով «իմաստուն» խորհուրդներով, այլ Հայրենիքը սիրել խրոխտ և շոշափելի իրական գործերով, Հայրենիքը սիրել Հայրենիքում ապրելով, այն շենացնելով, այն կառուցելով:

Վերոգրյալիս մասով կարծիք-տեսակետ՝ ինչքան ուզեք...

Այլ տեսակետ-կարծիքների առաջին իսկ երազողը հենց ինքն է՝ հակառակորդը, նրա հարյուրամյա ՁԵՌԱԳԻՐԸ, որի արդյունքում ձևավորվել է այսօրվա՝ մեր տարածաշրջանի դիմագիծը, այլևս նաև իրենով որոշող գործոն-պետությունը: Այդ ծանոթ ձեռագիրը՝ ահավասիկ քար ու մահակի, կոշտ ու բռնի, «մեղմ ու փափուկ» գրոհներով, հոգեբանությունդ, կամքդ թուլացնելու նպատակ հետապնդող մեթոդներով, իսլամական ազանկանչերով մեզ վախեցնելու, մեր օրրանը կամավոր լքելու բաղձանքն է թշնամու, որ կամավոր լքես քո տունը, ինչպես պարտադրեցին 1991թ. ապրիլ-մայիսին, բայց ո՛չ առանց թիկունքի, նաև հզոր քրիստոնյայի կերպարով և նրա աջակցությամբ: Առանց լավ թիկունքի թաթար-ազերին դա չի անում, միայն անում է, երբ թիկունքում հզոր ուժ ունի, երբ պատմական պահը ամենից հարմարն է՝ չգործող կարգուկանոնի առկայությամբ, երբ շուրջբոլորը զբաղված են իրենց հարցերով և դիմացինի թույլ ու խոցելի տեղը բռնելով: Այդպես եղել է հարյուր տարի առաջ, այդպես է և այսօր: Ուժեղներին է աշխարհը ճանապարհ տալիս, ուժն է ծնում իրավունքը, իսկ իրավունքը երկաթե շերեփի և սրի ծայրին է: Մեծերի խոսքը՝ մեզ ականջի օղ: Որ այլևս, գոնե այլևս չունենանք հազարավոր հայերի խեղված ճակատագրեր, հայրենի տների նոր ավերակներ, որ ամեն իրիկուն քնելուց առաջ քանի՜-քանի ու որերորդ անգամ չհաշվենք ու նորից հաշվենք ավերակված, կենդանի մահարձաններ դարձած տները մեր հարազատ շեների ու քաղաքների, հիշենք ու մտովի արժևորենք, թե ինչպիսի մեծատուն մարդկանց, ինչիպիսի հզոր ապուպապի, քեզ ու քեզ նման հարյուրավորների ծնած ու սնած մայրերի, մեծ մայրիկների շուրթերից հնչած օրորը, երգն ու կանչը, նրանց արարումի, քրտինքի ու տառապանքի ապրումներով օծված, ներծծված հողն ու ջուրը, սարն ու քարը մնացին խաշնարածին, սրբապղծվեցին ժամ ու եկեղեցի, խաչքար ու գերեզման:

Վեհաշուք Դիզափայտի լանջերին փռված ու թիկնած, ամեն օր Արաքսի՝ որպես արծաթե մի չքնաղ գոտու իրենց հայացքը հառած մեր գյուղերը, մեր Դիզակ աշխարհը և բոլոր այն կորսված շեները, որ բախտակիցը դարձան արնաշաղախ Մարաղայի, Մադրասայի, Չարդախլուի, տակավին հայախոս ու հայաշունչ Հայ Պարիսի, Վերին շենի և... Թվարկման՝ ասես անվերջանալի գումարելիների արդյունքում մի մեծ հանրագումար, որ կոչվում է կորսված ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ՀԱՅՐԵՆԻՔ:

Եվ այդքանն ու այսքանը այսօր՝ 21-րդ դարի 20-ական թթ. Ուղիղ 300 հարյուր տարի առաջ նույն իրական ծրագրով Օսմանյան Թուրքիան էր յաթաղանով, հրոսակներով հասել Սյունիք, Արցախ. Նույն՝ ճիշտ այսօրվա հեռահար ծրագրով, այնժամ հաստատվել չկարողացան, երեք դար անց Թուրքիայի թուրքը հասավ Արցախ, հասավ Շուշի և Ակնա...

Հոգուս ցավը չի լռում և նորից է աղաղակում, ճչում...

Եվ ո՞վ, ինձնից մեզնից հետո ո՞վ պիտի հիշատակի ու իմանա, որ կորսված մեր հայոց գյուղերում ինչքան հայեցի, ինչքան զուտ հայկական, գեղեցիկ տիրական-իշխանական անուններով աշխատավոր գերդաստաններ (Սևունց, Վնեսանց, Պողոսանց, Ղզարանց, Ուդուլանց, Ալեքսանանց, Կյափունց, Ավանանց, Քյասունց և էլ որն ասեմ, բոլոր գյուղերում ավաններում, քաղաքներում), Թագուհի, Փառանձեմ, Շողեր, Լուսիկ, Անգին, Համբարձում, Սարգիս, Սանթուր, Ալեքսան, Աշոտ, Մելիք, Ավանես... Այսպիսի փառավոր, միայն հայկական անուններով գեղեցիկ կանայք ու այրերն են հնօրյա ու նորօրյա մեր Հայրենիքի այս կողմերի պատմությունը կերտել, քարն ու ապառաժը բուրաստան, այգի ու արտ են դարձրել, ամբարները լցրել ձմեռվա պաշարներով, իսկ ցուրտ ձմռանը՝ կիրակի օրերին գրաստները բարձած բնամթերքի տեսականիով հասել են Ջաբրայիլ (ժողովուրդը այդպես չէր ասում, ասում էր Կիրախտին-Կրախտին), որ իրենց դառն քրտինքի արգասիքը կոպեկներով վաճառեն թաթար-ազերուն...

Ակամայից և երևի տեղին հիշեցի Մեծն Համո Սահյանին. Հիմա այդ մեծ գերդաս-

ՄԱՅՐԵՆԻ

տանների ավագներից ոչ մեկը չկա, շառավիղներն են՝ աշխարհով մեկ ցիրուցան, օտարին հենված, անունները՝ հայրական, իրենք՝ անհայրենիք:

…2023թ. փետրվարի 6. Երկրաշարժ Թուրքիայում, բայց հիմնականում թուրքահպատակ մեր էրգրում էր, մեր մեծ պատմական Հայրենիքի արևմտյան հատվածում, որտեղ փլատակների տակ մեր քույր-եղբայրներից ևս մնացին, նրանք, որ թեկուզ այլախոս, «թեկուզ թաքուն ու ծպտյալ հայ» անունով, բայց հոգու խորքում և էությամբ հայ են մնացել, հայ-քրիստոնյա, մնացել, ապրել են հայրենի էրգրում, որ հայի հոգով ու ոգով, թերևս լռին ու անշշուկ՝ հայի երգն ու պարն են հնչեցրել Հայոց հայրենիքում, մնացել և իրենց մանչերին Տարոն ու Վարդան անունն են տվել, քաջն Վարդանի անունով, որ մեծ ոճիրից հարյուր տարի անց էլ փլատակների տակից 126 ժամ մնալուց հետո դուրս գա կենդանի և առողջ, որ ապրի, որ հայ Վարդանն ու Վարդանները, որ հայն ապրի Հայոց էրգրում: Էրգրում ապրող հայերի թվերը տարբեր են ու շատ խոսուն, գուցե հազարների, միլիոնի և ավելիին հասնող…:

Մեծ ոճիրից փրկված բեկորների շառավիղներն են նրանք, որ շարունակել են ապրել Հայրենիքում, ուրեմն Հայոց հոգու ու ոգու շունչն է դեռ շրշում-շնչում Տարոն աշխարհում շնորհիվ նրանց, որ մնացին և թերևս կրեցին «թաքուն ծպտյալ հայ» անունը, բայց մնացին և ապրեցին, որ թերևս աներևույթ, անտեսանելի ու անխոս, բայց Հայոց Հոգին, Հայի Հոգին սավառնի էրգրում: Հիմա ես ինչպե՞ս դատեմ ու համարձակվեմ դատել, ի՞նչ ասեմ, ասեմ ինչո՞ւ են մնացել երկրում:

Չէ՞, ճիշտ են արել, որ սրից քշվել, բայց մնացել են, շարունակել են ապրել, որ Մուշում, Բայազետում իրենց վաճառատան ճակատին թեկուզ անգլերենով գրեն «Արարատ» կամ «Արմինե», որ հին Մուշի Հայոց թաղամասում մեզ հանդիպած տարեց ու գեղեցիկ, խաժ աչքերով հայուհին ամոթխած, թախծոտ աչքերով ցույց տա մոտակա սարի լանջին երևացող ժամանակի փոշուց դեղնած ու մամռոտ գերեզմանաքարերը և ասի, որ իր պապերի, իր հոր ու մոր գերեզմաններն են, և նրանք հայեր էին…

Իսկ ո՞րն է, ո՞րն է չարագույններից-չարագույն իրավիճակում հայտնված հայի Ապրելու բանաձևը, ընտրության, հարցի, խնդրի լուծման ճիշտ բանաձևը: Ինքնության, Անուն-Ազգանունի պահպանման կենսաբանաձևը, գոյաբանաձևը մեկն է ու միակ ճիշտը՝ մնալ Հայրենիքում, ապրել Հայրենիքում, վերընձուղվել, շիվեր տալ Հայրենիքում՝ հանուն բացարձակ արժեք ազգային դիմագծի, ազգային ինքնության և ազգային ազատության՝ ապրել Հայրենիքում, լինել հայի հավերժական երթը պահող ազգային հերթապահության ամենից կարգապահ, խիզախ մարտիկը:

Իսկ թե մեկի մտքով անցել է հեռանալ, թող այցելի «Մենք ենք մեր սարերը» հուշակոթողի բարձունքը, հայացք ձգի դեպի հարավ, Արաքս, Դիզափայտ ու Հադրութ, դեպի արևելք՝ անառիկ Մոնթեաբերդ, դեպի հյուսիս՝ «Եղնիկներ» ու Մռավ սար, ապա նայի երկնքին, ուր անմահ ընկած տղաների կուռ շարքերն են, նրանց հայացքները, նրանց անմահ ժպիտները տեղավորի իր սրտում և հարցնի իրեն. «Իսկ տղաներից ստացե՞լ է թույլտվություն. Ընկած տղաները և հայրենի հողը հեռանալու թույլտվություն տվե՞լ են իրեն»:

Խելացիորեն, միասնաբա՛ր ապրենք, գոնե վերջին կորսված, մեր անմահ տղաների ոտնահետքերով ու արյամբ շաղախված Հող-հայրենին հետ բերենք, որ մեր բարձունքներն ու սարերը չդառնան ազանի հնչեցման վայրեր, որ մեր գետերի կարկաչին հավերժորեն ձուլվեն մեր վանքերի ու եկեղեցիների զանգերի ու կոչնակների զիլ ձայները:

Լաուրա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Ստեփանակերտի հ. 2 դպրոցի տնօրեն

ԱՄՈՒՐ ՓԱՐՎԵՆՔ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԱՅՄԻՆ

1 Արցախում չկա մի ուսումնական հաստատություն, որ չնշի Մայրենիի օրը. «Չի եղել մի դպրոց, որի միջոցառմանը մասնակցենք ու հոգեկան մեծ բավականություն չստանանք: Ամեն մեկը յուրովի, ինքնատիպ միջոցառում է կազմակերպում, ինչը վկայում է մեր ժողովրդի վերաբերմունքը առ մայրենի»: Դրա համար Լեզվի տեսչությունը ամեն անգամ կոչ է անում աշակերտներին, որ չսահմանափակվեն միայն Փետրվարի 21-ով, այդ օրը ասմունքելով կամ ներբողներ ձոնելով մայրենիին, այլ ամեն օր զգանք լեզվի դերը մեր բոլորիս կյանքում:

Փետրվար ամիսը զուգորդվում է նաև մեր ազգային զարթոնքի և Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի անվան հետ, որի ծննդյան և այդ կապակցությամբ՝ Գիրք նվիրելու օրը՝ Փետրվարի 19-ը, մեզանում վերածվել է գեղեցիկ իրադարձության: Մեծից մինչև փոքր նորից ու կրկին սերտում ենք Թումանյանի ստեղծագործությունները, զգում նրա՝ մեր կողքին, մեզ հետ լինելու պահանջը: Թումանյանը մի դիպուկ բնորոշում ունի լեզվի մասին, ասում է՝ մեր լեզվի մեջ ապրում է մեր ժողովրդի պատմությունը: Հրաշալի է ասված: Մի քանի տարի անց Վահան Տերյանը ամբողջացրեց այս միտքը՝ մեր լեզվի ծոցում ապրում է ոչ միայն մեր պատմությունը, այլև ներկան, այլև գալիք օրը: Այո, մեր ապագան մեծապես կախված է նաև հայոց լեզվից: Իսկապես, Համո Սահյանի խոսքով՝ «Ի՞նչ ունենք էլ աշխարհում, Որ այսքան մերը լինի»:

Մայրենիին նվիրված միջոցառմանը դպրոցները ներկայացրին ասմունք, երգ կամ պար, գրական երկի վերլուծություն: «Լավերն այնքան շատ էին, որ մենք դժվարանում էինք ընտրել: Մեր երկրին պատուհասած դժվարությունները ոչ միայն չեն ընկճել արցախցուն, այլև ավելի են բարձրացրել նրա ոգին»,- ասում է մրցութային հանձնաժողովի անդամ Աննա Այվազյանը:

Հանձնաժողովի որոշմամբ՝ յուրաքանչյուր անվանակարգից մեկ մասնակից է հաղթող ճանաչվել:

«Երգ» անվանակարգում լավագույն կատարող է ճանաչվել Ստեփանակերտի Ե.Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի աշակերտ Կառլեն Բաղրյանը:

Գրական ստեղծագործության վերլուծության համար առաջինը նույն դպրոցից Աննա Ասծատրյանն է:

«Պար» անվանակարգում առաջին տեղում Շուշիի Խ.Աբովյանի անվան դպրոցի աշակերտուհի Սուսաննա Ասրյանն է:

Մրցույթի լավագույն ասմունքող է ճանաչվել Ասկերանի է. Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտուհի Կարոլինա Սարգսյանը:

Ներկաների ունկերում դեռ երկար արձագանք կտա Հովհ. Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծության տողերով երգը Ստեփանակերտի Հովհ. Թումանյանի անվան հ. 9 հիմնական դպրոցի երգչախմբի կատարմամբ.

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած
ես դու կենդանի,
Կանգնած խոհո՜ւն, խորհրդավոր ճամփին նորի ու հընի.
Հառաչանքով սրտի խորքից խոսք ես
խոսում Աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղետ,
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ պիտ
ասես աշխարհքին
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ծրգտում
է մեր հոգին -
Հույսի՜ հայրենիք,
Լույսի՜ հայրենիք:

Երեխաների այս և մյուս կատարումներն աշխարհին ասում են՝ Արցախը մենք ենք, իսկ մենք կանք, ապրում ենք, ապրելու ենք:

Սեփ. լրատվություն

ՎԻԿՏՈՐԻՆԱ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՅՐԵՆԻԻՆ

Մայրենիի օրվան էր նվիրված փետրվարի 21-ին մեր դպրոցի միջոցառումը՝ թիմային վիկտորինա խաղը՝ 7-րդ «ա», «բ», «գ» դասարանների աշակերտների մասնակցությամբ, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհիներ Վարսիկ Միրզոյանի, Մարինե Հարությունյանի, Արմինե Մուրադյանի նախաձեռնությամբ:

Բացման խոսքով հանդես եկավ Արմինե Մուրադյանը: Ուսուցիչներին, աշակերտներին ուղղված՝ Մայրենիի միջազգային օրվա կապակցությամբ արժևորված խոսք էր այն, որի արձագանքները դարերի խորքերից էին գալիս՝ հայ ժողովրդի դժվարին ճանապարհը լուսավորելով, Աստծո օրհնությամբ ստեղծված ոսկեղենիկ հայերենի փայլատակումով.

«Մայրենի լեզուն մեր պապերի, մեր հայրերի քրտինքն է, որ շաղախվել է նրանց արյամբ փրկված սուրբ հողին, մեր մայրերի ծոցում պահված, մաքրամաքուր ու անաղարտ, անուշահամ ու կենարար կաթն է, որ ռազմի դաշտում, թե ամենուր ուժ է տալիս հայ զինվորի և զորավարի բազկին ու մտքին: Նա է հավերժացած հայոց հավատը, նրա խոյացած վրեժն ու ցասումը, նրանով են թպրտում մեր սրտերը»:

Խաղը վարում էր ուսուցչուհի Ա.Մուրադյանը՝ հայոց լեզվի մասին բազմաթիվ հետաքրքիր ու տրամաբանական հարցերով, որոնց պատասխաններն ամփոփում էր ընտրած հանձնաժողովը: Մայրենիի մասին ասմունքը, ասացվածքները, բազմաթիվ հարցեր աշխուժություն էին ստեղծել մեր շուրջը:

Վիկտորինան ավարտվեց մասնակիցների խմբերգով, որը նվիրված էր Մայրենիին, և որի երաժշտության հոգեպարար մեղեդայնությունը լրացնում էր ուսուցչուհի Արմինե Մուրադյանը:

Ամփոփելով թիմային աշխատանքները՝ առաջին տեղում հաղթող ճանաչվեց 7-րդ «ա» դասարանի «Կայծեր» թիմը, երկրորդ տեղում

7-րդ «գ» դասարանի «Զրաբերդ» թիմն էր, երրորդը՝ 7-րդ «բ» դասարանի «Հայուհի» թիմը:

Տնօրեն Ռուզաննա Հարությունյանի կողմից պատվոգրեր հանձնվեցին թիմերին, նրա շնորհակալական խոսքում աշակերտներն էին և նրանց դասավանդող ուսուցչուհիները, որոնք, Մայրենիի օրվա կապակցությամբ մի նոր շուք էին տվել այդ տոնին:

(Նատաշա ՊՈՂՈՍՅԱՆԻ ֆբ-յան էջից)

ՀԱՅ ՄԵԾԵՐ

ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆ



Թումանյանից առաջ մենք ամեն ինչ ունեինք և ոչինչ չունեինք, ինչպես որ աստվածային Բանից առաջ ամեն ինչ կար և ոչինչ չկար: Մենք հող ու հայրենիք, բարեկամ և թշնամի,ջանք ու տառապանք, խինդ ու ծիծաղ և անգամ հազարամյա մշակույթ ունեինք՝ բանարվեստի, զարդարվեստի, երգարվեստի մի ամբողջ լեռնաշխարհ, որի վերընթացն իզուր էր լինելու, եթե չպսակվեր իրենով Արարատով: Մաքուր վաղորդայնի պես, որպես մաքուր վաղորդայն՝ Թումանյանը ցողվեց այդ ամենի վրա, փռվեց, սփռվեց, բացեց, բացահայտեց այդ ամենն ու իրեն այդ ամբողջի մեջ և հավաքեց այդ ամբողջը իրենով ու իր շուրջը: Այդպես մեկ էլ հայրենիքն է իմաստ ու նշանակություն տալիս իր մեծուփոքրի ջանքին, իր կենդան ու անկենդան գոյին:

Ապա մի, եթե կարող եք, բուն իսկ ձեր գոյությունը մերժելով անհայտի ծովին տվեք իրեն, տեսեք ինչեր ու ովքեր են սուզվում իր հետ, տեսեք նախնիներից բան մնո՞ւմ է իրենից հետո, իրենից հետո բան գալի՞ս է, դուք ինքներդ մնո՞ւմ եք, տեսեք համայն մարդկության մեծերն ու մարդկայնությունն ինքը ձեզ համար մնո՞ւմ են, հայոց ձեր լեզուն զորո՞ւմ է վերծանել, արծարծել, թոթափել, նորել ու յուրացնել տարալեզու աստվածային գիրը, որ բոլոր ժողովուրդների ու ժամանակների դավանանքն է:

Գրեթե այս մասին կամ հենց այս մասին ասված է. «Ես աստծո որդին եմ, որովհետև իր ղրկածն եմ, և հայրը, որովհետև ձեր հոգիներում իրեն ես ծնեցի, ես ինքն աստվածն եմ»: Կամ այսպես. «Ես ձեր կանչով եկա և ձեր որդին եմ, և հավատը առ ձեր իսկ գոյության ձեզանում ես արթնացրի և ես ձեր հայրն եմ»:

Վեհորեն բարձրի մեր համազգային, մարդկության այս հայ ընտանիքի ձգտումն էր ինքը և առնչումը այդ վեհին ու վերին: Առանց Թումանյանի մեզ համար օտար տաճարների խորթ, եթե ոչ թշնամի, կուռքեր էին լինելու մարդկության ամենապայծառ ճակատները: Իսկ այսպես՝ իր կենդանի, շենշող, բարձր ներկայությամբ՝ մեր իսկ ինքնաճանաչումը և, պատկառանքից զատ, հաճախ նույնիսկ սերն ու մտերմությունն է ցոլում ամենաայլազան ժողովուրդների ու լեզուների աշխարհներից: Իսկ եթե պատահում է չի ծնվում, մեզանում չի թրթռում այդ հաղորդությունը, իր խրախուսիչ ներկայությամբ վստահ՝ մեզ սուտ ու անկատար են երևում այդ աստվածությունները և ոչ մենք ինքներս:

Թումանյանով՝ մենք կանք: Առանց Թումանյանի՝ մենք չկանք: Տարազգի-տարալեզու գրականության մեծ աշխարհ մենք մտնում ենք Թումանյանով՝ և այդ աշխարհը այլևս մեր հայրենի եզերքն է: Առանց Թումանյանի՝ այդ եզերքը մերը չէ, այլև մենք այդ աշխարհի առջև կանգնած ենք աղքատ ազգականի մեր խեղճ ու ցածր թշնամանքով:

Անցյալի և ապագայի, անձնականի և ընդհանրականի, ազգայինի և համամարդկայինի, ժամանակավորի և հավերժականի մեկ և ընդհանուր սահմանին կանգնած՝ նա ժամանակավորից պատմականություն է պահանջում և հավերժականից ներկայություն, համամարդկայինից ստույգ հայեցիություն է պահանջում և հայեցիից համամարդկայնություն. մշակույթները եթե համամարդկային չեն՝ մշակույթ չեն և չեն կարող ու չպետք է ճամփորդեն հայրենիքների ու ժամանակների միջով: Այդպես՝ զուտ ոսկին է սահմաններն անցնում և բնությունից քաղաբերված օրենքները: Այդպես՝ վերահսկման ու փոխվերահսկման պայմաններում՝ իրենց տեղերում ու ժամանակներում, ճիշտ է, գոյանում, բայց և պարտադրորեն քայքայվում են այն վատ նկրտումներն ու հավակնումները, որ ուղղակի դրսևորումն են մարդ-գազանի, բայց մարդկային մշակույթի, դավանանքի ու գաղափարախոսության տեսք են առնում և նույնիսկ բանակներ կապում:

Այն ժողովրդի մեջ՝ որ աշխարհ էր բերել Թումանյանին, այն վայրերում՝ ուր Թումանյանի հոգին մարմնացել էր մի ճկուն, խիզախ ու մաքուր հասակով, հին բարձր կեցության բեկորներ կային, որոնցից առաջինն իհարկե մայրենին էր, ապա բեկված վանքերն ու պարիսպներն ու կամուրջները... ապա նույնիսկ գրի պատառիկներ իր հեռավոր նախնու ազնվական վիճակի մասին: Բայց իրենով վկայվելու էր շատ ավելի մեծ բան, քան նախնու և նախնիների իշխանական զորությունը, քան որմնադիրների-մատենագիրների-այգեպանների նշխարներից հազարամյա այս սև անապատում հայոց հանգրվան կապելու եվրո-ռուսական ջանքի հաջողությունը. իրենով վկայվելու էր, թե արև աստվածը, գառնուկ ախպերը, մարդ արարածն առհասարակ, ազատ կյանքն ինքը չարի հարվածների տակ մեկընդմի՞շտ են մտնում քարայր, վիշապօձի շապիկ, գառան մորթի... հավիտյա՞նս են տրվում մահվան, քնի, թմբիրի գերության, թե՞ ազատությունը կարող է քարությունից հանել մարդուն ու բազմեցնել իր նախասահմանված գահին, մի գերությունից արձակված մարդը չի՞ տրվում մի այլ ու թերևս վատթար գերության:

Ինքն ահա չտրվեց. իրենով՝ ազատությունը մեր հորիզոնից բարձրացավ կատարյալ գեղեցկության կերպարով:

Ծեծված, կողոպտված, ոտնատակի այգու պտուղ՝ նա դառն էր լինելու և էր. առավել քան իրենից այս ժողովուրդը ուրիշ ոչ մի բերանից այդքան դառը նախատինք չի լսել:

Ծվատված, բաժբաժված, միմյանցից խլխլված ժողովրդի զավակ՝ նա պիտի հայրենիքի զինվոր լիներ և էր. միայն նախախնամությամբ և միայն երեսուն տարով՝ զինվորի նրա կյանքը ետ պահվեց այն ջոկատից, որ հայրենական հողի թշնամական բաժանագծի վրա գնդակոծվեց և թիկունքից, և ճակատից. զինվորի տուրքը կյանքով է տրվում, երեսուն տարի անց զինվորի իր տուրքը նա մարեց եղբայրների, Թումանյանի իր և չորս որդու կյանքով, և փամփուշտները ճայթեցին թե թիկունքից, թե դեմառդեմ ճակատից:

Դեպի իմացության ու կենցաղի լույս համաժողովրդական ընթացքի ուխտավոր՝ նա լուսավորիչ էր լինելու և էր. դպրոցականի համար որպես «անցնելու նյութ» գրված նրա ոտանավորն ու զրույցը գրքից գիրք և հասակից հասակ անցնելով



արդեն հարյուր տարի գալիս են և դեռ մեզնից ու մեր թոռներից են անցնելու:

Նրա ահազանգի ու արագ արձագանքի, նրա ձեռնարկումի, նրա մտքի ու եռանդի արդյունք են կրթագիտական, գրական-մշակութային, գիտամշակութային այն հիմնարար հաստատությունները, որ մի ժողովրդի վերածեցնում են ազգի և ազգը մղում պետականության:

Ամենահեղափոխական ոչ մի հեղափոխական չի կարող մեղադրել, թե պատերազմների ու հեղափոխությունների իր ժամանակ նա դրոշներից հեռու էր կանգնած, ինչպես և ազգային ցավից խելագարված որևէ ազգայնական՝ թե դրոշը նրա ձեռքին չէր:

Կործանման ու ողբերգական իրադարձությունների ժամանակակից՝ նա պիտի իր ժողովրդի ողբերգուն լիներ և էր: Իր ժամանակի և ոչ մի երևույթ չի կարող վկայել՝ թե իր բուն խորքերում նա չի եղել, իր ժամանակի ոչ մի օրը չի կարող ասել՝ թե չի հիշում նրան, ոչ ոք՝ ոչ օտարազգի սարսափահար պանդուխտը, ոչ մեռնող եղջերուն, ոչ աղոթքի ծնկած ծերը՝ չի կարող կշտամբել, թե իր օրհասի պահին, իր վեհանալու հրաշքին նա ներկա չէր:

Բայց նա այդ բոլորի ու ամենքի գերին չէր, իր կործանված հայրենիքի հետ՝ ատելության կաշկանդյալը չէր և հույսի փրկված ծվեններին հետ՝ երախտիքի կաշկանդյալը չէր - նա տեր էր այդ ամբողջի ու ամենի վրա, այդ ամբողջն ու ամենը նրա տիրական ճախրի ներքո էր: Այդպես միայն զորավար-արքաներն են լինում:

Այդ ամբողջը նրա աշխարհն է՝ Թումանյանի թագավորությունը, և մենք այդ թագավորության հպատակներն ենք, մենք՝ իրենից հետո եկածներս, նրանք՝ իրենից առաջ ապրած-անցածները, մարդիկ, կենդանիներ, ազգեր, ցեղեր, ձևեր, կերպեր, երևույթներ, պատմություն, առասպելներ, զրույցներ, լեզու, երեխաներ, լույս, կարոտ, սեր, մահ, հաշտություն, թշնամանք... և ուրիշ ոչ մի տեղ այնքան հեշտ ու թեթև չեն թրթռում, ապրում, խաղում, ինչպես նրա ժպտուն շնչի տակ: Մտիր հայոց Բանի այդ աշխարհ և հարյուր տարի ու հազար տարի խաղա, կռվիր, հաշտվիր, երգիր, ծիծաղիր, խորհիր, խոկա, ձգտիր, ճանաչիր, բարեկամացիր, թշնամացիր... եղիր:

Եվ ուրիշ ոչ մի աշխարհ՝ ոչ գրի ու ոչ էլ իրական՝ մեր երեխային, մեր մարդուն, ինքներս մեզ այնքան վստահ չենք ղրկում ճամփորդության, ինչքան Թումանյանի թագավորություն, և ուրիշ ոչ մի աշխարհում ոչ ոք ու ոչինչ այնքան վաղածանոթ ու մտերիմ չէ, ինչքան Թումանյանի աշխարհում, մեր ծնունդից առաջ ասես այնտեղ ենք ապրել, մեր այս երկիր ասես այնտեղից ենք եկել:

Հրանտ Մաթևոսյան

Հովհաննես Թումանյան, Ընտրանի, «Հայագիտակ» հրատ., Եր., 2001թ.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Մանկությունը մարդու կյանքի էն ամենաընդունակ շրջանն է, երբ չորս կողմից ընդունում է, սնունդ է առնում ու զարգանում շարունակ: Հետևաբար՝ շարունակ էլ պետք է սնունդ տալ նրան, որ միշտ աճի ու զարգանա: Եվ ահա հենց էստեղ էլ հարց է առաջ գալիս՝ ի՞նչ սնունդ տալ, և ի՞նչ ձևով տալ: Ինչ վերաբերում է սնունդին, ամեն բան, ինչ որ շրջապատում է նրան, ինչ որ գոյություն ունի աշխարհքում, սնունդ է նրա համար: Միայն թե պետք է իմանալ, գտնել էս անսպառ սնունդ տալու ձևը: Եվ մինչդեռ մենք նստած խորը մտածում ենք էս դժար հանելուկի վրա, ինքը, մանուկ հասակը, ցույց է տալիս էն հրաշալի ձևը ու ամեն տեսակի սնունդ էլ պահանջում է իր ուզած ձևով՝ խաղով: Խաղը նրա, մանուկ մարդու, բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է: Խաղում է նրա մատաղ կյանքի ամեն մի մասնիկը, խաղում է նրա թրթռուն սիրտը ջահել կրծքի մեջ, ու կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, խաղով է քննում, խաղով է ճանաչում ու ընդունում: Դա նրա ձևն է, նրա մեթոդն է: Եվ ամեն բան, ինչ որ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունում է, հեշտ էլ յուրացնում, առանց ճանձրանալու, առանց հոգնելու:

Հովհ. Թումանյան «Ազդ», 1915

* * *

Դաժան վիճակն ու երկարատև խավարը դարերի ընթացքում շատ ախտ ու կեղտ են կուտակել մեր կյանքի ու հոգու վրա, բայց մենք կուլտուրաներ ունեցած ու ապրած ժողովուրդ ենք, հեշտ կարող ենք թոթափել մեզնից էդ ամենը և նորից կանգնել մաքուր, առողջ ու բարձր: Էդ հրաշքը կարող ենք կատարել միայն դպրոցի ու գրականության միջոցով, իսկ դպրոցն ու գրականությունը անբաժանելի հասկացողություն են:

Դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը դպրոցի բովանդակությունը, երկուսը միացած են պայծառ ու լուսավոր ուժով, որով հզոր ու անխորտակելի են դառնում ժողովուրդները ու մտնում են կուլտուրական ազգերի եղբայրության մեջ:

Հովհ. Թումանյան «Դպրոց և գրականություն», 1913

* * *

Ի՞նչ կնշանակի դպրոց ու գրականություն: Դպրոց՝ կնշանակի ուսուցիչ, գրականություն՝ կնշանակի գրող: Եվ ուժեղ դպրոց ու գրականություն ունենալ՝ կնշանակի ուժեղ ուսուցիչ ու գրող ունենալ: Էս է պարզը: Եվ էսպես են հասկացել էն ազգերը, որոնք կարճ ժամանակում մեծ հառաջադիմություն են արել, և սրա մեջն է նրանց արագ, գրեթե հանկարծակի ուժեղանալու գաղտնիքը:

* * *

... Եթե դպրոցը ուսուցիչն է, ապա պետք է արժանին մատուցել նրան, պետք է լուծել հայ ուսուցչի ապահովության խնդիրը, այլապես ոչ միայն նա կփախչի դպրոցից, այլև կփախցնի իր զավակներին՝ տալով օտար դպրոցներ, որ նրանք զերծ լինեն Ազգային մշակույթի անդաստանում աշխատողների չարքաշ կյանքից:

Հովհ. Թումանյան «Մեծ տոնը և հայ ուսուցիչն ու գրողը», 1913

Ուսումնարան ասելով ավելի շուտ շենքն են հասկանում, քան թե ուսուցիչ ու աշակերտ: Եվ էդ հասկացողությունն է խոր պատճառը, որ ուսուցիչը մեզանում էնքան հաճախ ու հեշտ ենթարկվում է զրկանքի, հալածանքի ու արհամարհանքի: Ուսումնարանի գաղափարը նրա հետ չի կապված, այլ շենքի:

Հովհ. Թումանյան «Ձևն ու հոգին», 1910 թ

Հերիք էր ինչքան տանջվեց ու տառապեց հայ ուսուցիչը, հերիք էր ինչքան տուժեց սովորող սերունդը, հերիք էր, ինչքան ալեկոծվեց ու կարգ պահանջեց հասարակությունը:

Հովհ. Թումանյան «Ընդհանուր ուսուցչական խնդիր», 1910

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԱՐՏԱԿԱՐԳ ՌԵԺԻՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Արցախ մտնող գազը Ադրբեջանի կողմից փակելու հետևանքով և էլեկտրական հոսանքը հովհարային անջատումների, ինչպես նաև շրջափակման պատճառով Արցախում կյանքն ընթանում է արտակարգ ռեժիմի պայմաններում: Բնականաբար դրանից տուժում են բոլոր ենթակառուցվածքները: Մասնավորապես՝ կրթական գործը, հատկապես՝ հանրակրթական դպրոցները: Ադրբեջանական «էկոակտիվիստների» կողմից դեկտեմբերին առաջին գազանջատման ժամանակ փակվեցին Արցախի բոլոր դպրոցներն այն հույսով, որ դա կարճ կտևի, քանի որ աշխարհը կտեսնի, որ շուրջ 30 հազար երեխա հողագնդի մի փոքրիկ կետում, որի ժողովուրդը պայքարում է իր հողում ապրելու համար, զրկված է կրթություն ստանալու աշխարհում համընդունված իրավունքից և պատժամիջոցներ կիրականացնի Ադրբեջանի նկատմամբ. չէ՞ որ կրթությունն ու գիտությունը վեր են քաղաքականությունից: Բայց միջազգային օրենքներ ասվածը Ադրբեջանի համար չէ: Ճիշտ է, մեկ շաբաթ անց գազը տրվեց, բայց մեկ օր տևեց: Եվ այդ բացել-փակելը թշնամու կողմից արդեն սկսեց կրել պարբերական բնույթ: Հասկանալի է, որ սննդի, վառելիքի, դեղորայքի պաշարները սպառվելու նպատակի հետ մեկտեղ մեր «վայ» հարևանը ավելի շատ արցախցու նյարդերով խաղալու և հոգեբանական ճնշում գործադրելու անիրականանալի փափագ է հետապնդում: Ամեն ոլորտ այսօր աշխատում է իր առանձնահատկություններով պայմանավորված ռեժիմով: Դժվար է բոլորի և հատկապես՝ ուսումնական գործընթացի համար: Կրթությունն այն ոլորտն է, որի չնախատեսված դադարով առաջացած բացը ժամանակը, մեղմ ասած, չի լրացնում: Ուսուցումը պետք է լինի անընդհատ:

Արցախի դպրոցների մեծ մասը ջեռուցվում է փայտով, որը՝ ավանդական փայտի վառարանով, որը՝ փայտի կաթսայատան միջոցով՝ կենտրոնացված ջեռուցմամբ:

Գազանջատման դեպքում ամենամեծ խնդիրն ունեցավ մայրաքաղաք Ստեփանակերտը, որտեղ կենտրոնացված է հանրապետության աշակերտության գրեթե կեսը: Այստեղ 5 դպրոց է ջեռուցվում փայտով, որտեղ լիարժեք կրթությունը շարունակեցին բոլոր օղակները: Գազով ջեռուցվող դպրոցներին քաղաքապետարանը փայտ և վառարաններ տրամադրեց, բայց ուսուցումը շարունակելու հնարավորություն ստեղծված էր միայն 9-12-րդ դասարանների սովորողների համար, այդ թվում՝ Շուշիի և Հադրութի դպրոցների:

Շրջանների գազով ջեռուցվող դպրոցներում նույնպես խնդիր եղավ: Այդտեղ նույնպես ուսուցումը կազմակերպվեց 9-12-րդ դասարանների համար: Այս ամենի համապատկերին պետք է առանձնացնել Մարտունու շրջանի Խնուշինակի միջնակարգ դպրոցը, որը նույնպես գազով է ջեռուցվում, բայց տնօրեն Նարինե Հայրապետյանի նախաձեռնությամբ և կազմակերպչական ունակությունների շնորհիվ ուսուցումը տարվեց բոլոր օղակներում, անգամ՝ նախադպրոցական խմբում: Մենք հեռախոսակապով միացանք տնօրենի հետ՝ հետաքրքրվելու, թե ինչպես է նրան հաջողվել չընդհատել դասապրոցեսը ստեղծված պայմաններում, և ահա թե ինչ ասաց նա.

- Երբ իմացանք, որ գազով ջեռուցվող դպրոցները չպիտի կարողանան լիարժեք աշխատել, ամբողջ գիշեր չքնեցի, մտածեցի, թե ինչ կարելի է անել: Հաջորդ օրը շուտափույթ մանկավարժական և աշակերտական խորհուրդների, ծնողական կոմիտեների արտահերթ նիստ հրավիրեցի և ներկայացրի իրավիճակը: Բացատրեցի, որ այս վիճակը կարող է երկար տևել, իսկ երեխաների կրթությունը չպետք է ընդհատվի: Առաջարկեցի, և բոլորի կողմից հավանության արժանացավ այն միտքը, որ դասարաններում տեղադրենք փայտի վառարաններ: Ծնողները բերեցին՝ ով ինչ կարող է. մեկը՝ վառարան, մեկը՝ ծխնելույզ, մյուսը՝ ունելի (մաշա): Նույն կերպ համատեղ ուժերով հայթայթեցինք նաև փայտը: Եվ այդպես 12 դասարանների քանակով վառարաններ տեղադրեցինք: Ամբողջ գիշեր էլեկտրական հոսանքի բացակայության պայմաններում ձեռքի լապտերիկներով դասարաններում տեղադրեցինք վառարանները, վառեցինք, և առավոտյան երեխաները մտան տաք դասասենյակները: Պարապմունքները շարունակվեցին նաև նախադպրոցական խմբում: Ծնողները տանը թխած կարկանդակներ, տարբեր ուտելիքներ էին բերում և ապահովում փոքրիկների սնունդը: Տարրական դասարանների դասացուցակը փոխեցինք, և ուսուցիչները աշակերտների տներում են կազմակերպել դասերը:

Տնօրենը համեստաբար չասաց, բայց մենք այլ աղբյուրից իմացանք, որ միայն երկու վառարան ինքն է իր տնից բերել դպրոց: Այսինքն՝ այստեղ առկա են և՛ ղեկավարի անձնական օրինակը, և՛ դպրոց-ծնողական հասարակություն կապը, և՛ թիմային աշխատանքը, և՛ էլի շատ հատկանիշներ, ինչը նպաստում է դպրոցի անխափան գործունեությանը: Եվ այսպիսի կազմակերպվածության, միասնական, սրտացավ գործելակերպի շնորհիվ ինչպե՞ս կարող է դպրոցը հաջողություններ չունենալ: Ինչո՞ւ զարմանալ, որ այս դպրոցի 6-րդ դասարանցի Արեգ Այդինյանը օրերս մաթեմատիկայի հանրապետական օլիմպիադայում հաղթահարել է անցումային շեմը և անցել ՀՀ եզրափակիչ փուլ, որ ԱրՊՀ-ի կողմից կազմակերպված և այլ մրցույթներում այս դպրոցը լավ ցուցանիշներ ունի:

Ինչպես տեղեկացանք ԱՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Միքայել Համբարձումյանից, Խնուշինակի օրինակը եզակի չէ. Մարտունու շրջանի գազով ջեռուցվող դպրոցներից ևս 3-ը սեփական հնարավորություններով անցել էին փայտի ջեռուցման բոլոր դասարաններում: Ճարտարի հ.1 միջնակարգ հոսքային դպրոցը, որտեղ 9-12-րդ դասարաններում սովորելու են գալիս համայնքի մյուս երեք հիմնական դպրոցներից, օգտագործում էին փայտի, իսկ արևկող դասասենյակներում՝ էլեկտրական վառարաններ: Ինչպես պատմեց դպրոցի տնօրեն Ջավադ Հակոբյանը, դեռ առաջին գազանջատման ժամանակ ամբողջ գիշեր նրանք փորձարկել են էլեկտրական վառարանները, որպեսզի տեսնեն էլեկտրական գծերը մինչև քանի վառարանի կարող են դիմանալ: Պարզել են, որ 4 հատի դեպքում: Ավելորդ չէ նշել նաև վառելիքի սղության պատճառով մանկավարժների տեղաշարժման սահմանափակ հնարավորությունների հանգամանքը: Կոնկրետ տնօրեն Ջ. Հակոբյանը այդ օրերին ոտքով դպրոց էր հասնում 3,6 կմ հեռավորությունից, նրա հետ նաև՝ երեխաներ: Էլ չենք ասում, որ ուսուցիչներ կան, որ մի գյուղից մյուսն են գնում դասավանդելու:

Իսկ Մարտակերտի շրջանից ուղղակի բողոքներ են հնչել, թե ինչու են կասեցրել ուսումնական գործընթացը, երբ կարելի է շարունակել փայտի վառարաններով:

Փոխնախարար Մ. Համբարձումյանի կարծիքով, այն բոլոր տարբերակները՝ հայտնի, անհայտ, վաղուց մոռացված, հին, նոր, ավանդական, ինչը խթանում է ուսմանը, պետք է օգտագործել, և խրախուսանքի են արժանի բոլոր այն մանկավարժները, ովքեր իրավամբ, ջանք ու եռանդ չեն խնայում երեխաների կրթությունը պատշա՛ճ իրականացնելու համար:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Շնորհավորանք

ԱՐԺԱՆԻ ՎԱՍՏԱԿ

Սովորեցնելու մեջ ջանադիր, չզլացող, սովորելու մեջ երբեք չհոգնող ու աշխատասեր, կրթելու և դաստիարակելու մեջ փութաջան, սովորողի մեջ լավն ու բարին սերմանող, նրա մեջ միայն լավը տեսնող… հոգատար ծնող, լավագույն բարեկամ ու խորհրդատու. ահա մարդկային այն որակները, որ ամփոփված են Նաիրա Առստամյան մարդ-անհատի, ուսուցիչ-ղեկավարի, հայրենանվեր քաղաքացու մեջ:

Ծնվել է 1953 թվականի փետրվարի 8-ին Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղում: Առաջածորի միջնակարգի ոսկե մեդալակիր շրջանավարտն ընտրում է մոր՝ նույն դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհու մասնագիտությունը:

1974 թվականին գերազանց ավարտելով Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը՝ գործուղվում է աշխատելու Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղի դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի և փոխտնօրեն:

1979թ. նշանակվում է դպրոցի տնօրեն և շուրջ 4 տասնամյակ հաջողությամբ ղեկավարում է կրթօջախը՝ որպես հմուտ ղեկավար-առաջնորդ, որի ջանքերով դպրոցը շրջանում դառնում է առաջիններից:

Դյուրին չէր միաժամանակ համատեղել կնոջ, մոր, հարսի, ուսուցչի, ղեկավարի պարտականությունները, սակայն անքուն գիշերների ու անխոնջ նվիրումի շնորհիվ նրան հաջողվեց լինել հմուտ ղեկավար-առաջնորդ, սիրված ուսուցիչ ու հասարակական գործիչ, կրթել ու դաստիարակել հայրենիքին պիտանի չորս արու զավակ ու միաժամանակ ակտիվորեն թղթակցել տարբեր պարբերակների՝ վեր հանելով ժամանակի առումով կարևոր ու հրատապ խնդիրներ, տպագրության հանձնել մանկավարժամեթոդական հոդվածներ, որոնք հետագայում՝ 2018-ին պետք է ամբարվեին «Տագնապալից ու փոթորկածին օրեր» խորագրի տակ և, որպես գիրք-տարեգրություն, հանձնվեր ընթերցողի դատին:

Անխոնջ աշխատասիրության և գործին անձնուրաց նվիրվելու համար բազմավաստակ մանկավարժը բարձր է գնահատվել ոչ միայն իր սաների, գործընկերների ու համագյուղացիների կողմից, այլև՝ պետական ու կրթության պատասխանատուների՝ արժանանալով գովասանագրերի, պատվոգրերի ու մեդալների, վաստակավոր մանկավարժի վեհ կոչման, ճանաչվելով շրջանի տարվա լավագույն, ապա նաև՝ դարի լավագույն ուսուցիչ:

Այս ամենից զատ մեծագույն պարգևին, որ նա արժանացել է, իր համարյա թե կեսդարյա մանկավարժական գործունեության ընթացքում, իր սաների ամնացորդ ու անվերապահ սերն ու հարգանքն է:

Հետաքրքիր զուգադիպությամբ համատեղվել են գյուղի ազատագրման 30-ամյակն ու հայրենասեր տիկնոջ 70-ամյա հոբելյանը, ինչը չի կարելի դիտարկել որպես պատահականություն, քանզի Շարժման առաջին իսկ օրերից նա կանգնած է եղել նրա ակունքներում՝ համարձակորեն հանդես գալով կրակոտ ելույթներով, մայր Հայաստանին միանալու երազանքով տոգորված ցուցարարների շարքերում «միացում» վանկարկելով:

Այսօր ևս հայրենասեր հայուհին շարունակում է ապրել հայրենիքի ցավով ու խնդիրներով, փորձում իր խորհուրդներով ու կյանքի փորձով օգտակար լինել համայնքին ու հայրենակիցներին:

Հարգարժա՛ն տիկին Առստամյան, Վերին Հոռաթաղի Ք.Քոքսի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվի անունից թույլ տվեք շնորհավորել Ձեզ՝ 70-ամյա հոբելյանի առթիվ և շնորհակալություն հայտնել Ձեր նվիրումի ու մեծ ավանդի համար:

Պատիվ է ունենալ Ձեզ մեր կողքին, լսել Ձեր խորհուրդներն ու խրատները, շարունակել աշխատել կողք կողքի, վարակվել Ձեր եռանդով ու աշխատասիրությամբ, լուսավոր ապագայի հանդեպ հավատով:

Մաղթում ենք Ձեզ ամրակուռ առողջություն, երկար ու երջանիկ օրեր՝ խաղաղ ու ամբողջական Արցախում:

«Վերին Հոռաթաղի
Ք. Քոքսի անվան միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ-ի տնօրենություն

«Լուսարար»-ը սիրով միանում է շնորհավորանքին:

ԱՆՄԱՀ ՀԵՐՈՍՆԵՐ

ԳՈՆԵ ՇԻՐԻՄԻՆ ԿԱՐՈՂԱՆԱՅԻՆՔ ԱՅՑԻ ԳՆԱԼ, ՈՐ ԽԵՂԴՈՂ ԿԱՐՈՏԸ ՄԻ ՔԻՉ ԹԵԹԵՎԱՆԱՐ

2020 թվականի 44-օրյա պատերազմը խլեց կյանքեր: Շատ երիտասարդներ հերոսացան հայրենիքի ազատության համար մվող ծանր ու անհավասար պայքարում: Անմահացան՝ թողնելով անմար հուշեր, հերոսացան՝ պատգամելով սերունդներին շարունակել իրենց գործը, հեռացան՝ թողնելով միայնակ կարոտի ու վշտի մեջ պապանձված սրտեր:

Մեր հերոս նահատակներից շատերը հուղարկավորվել են Եռաբլուրում: 2022թ. դեկտեմբերի 12-ից սկսած՝ Արցախը ենթարկվեց շրջափակման: Ոսոխը փակեց Արցախը Հայաստանին միացնող միակ ճանապարհը: Հումանիտար ճգնաժամի վտանգ եւ այլ բազմաթիվ խնդիրներ առաջանալուց բացի զոհված ազատամարտիկների հարազատների համար անհնար դարձավ Եռաբլուր գնալը՝ կրկնապատկելով կորստի ցավը:

ՎՐԵԺ ԼՅՈՎԱՅԻ ՍԱՅԻՅԱՆ

Ծնվել է 1988թ. հոկտեմբերի 25-ին Թուրքմենստանի Աշխաբադ քաղաքում: Փոքր տարիքում հայրենիքի կանչով ծնողների հետ տեղափոխվել է Արցախ եւ բնակվել Մարտունու շրջանի Կաղարծի գյուղում: Ավարտել է Կաղարծու միջնակարգ դպրոցը: 2006-2008 թթ. ծառայել է ՊԲ շարքերում, արժանացել բազմաթիվ շնորհակալագրերի ու պատվոգրերի: 2009թ. ընտանիքով տեղափոխվել է Ստեփանակերտ եւ մշտական բնակություն հաստատել Արցախի մայրաքաղաքում: Մասնակցել է 2016 թվականի ապրիլյան պատերազմին:

Վրեժը նժդեհյան գաղափարների կրողն էր: Նրա գաղափարներն ու նպատակներն այնքան իրական ու արդիական են, որ շատ ուսուցողական կլինեին այժմյան սերունդների համար:

Նա ճշմարտախոս, անկեղծ բնավորություն ուներ: Բազմակողմանի զարգացած տղա էր: Մասնագիտական կրթություն չէր ստացել, բայց գերազանց տիրապետում էր տների արտաքին ու ներքին հարդարման արհեստին: Հմտորեն կատարում էր հաշվարկներ, մոտիկ էր թվաբանությանը: Հատկապես աչքի էր ընկնում իր հետաքրքիր վերլուծություններով քաղաքական թեմաների շուրջ, արտահայտում էր իր կոշտ ու կտրուկ, բայց միեւնույն ժամանակ բավականին լավատես հայացքները: Շատ բարի, հայրենասեր, սիրված ու հարգված անձնավորություն էր:

Ամուսնացած էր: Ունի որդի:

Ընտանիքին նվիրված զավակ էր, լավ որդի, եղբայր, ամուսին, հայր: Վրեժի համար իսկական հայ տղամարդը նա էր, ով չի խնայի հայրենիքի պաշտպանության համար առաջնահերթ իր, ապա՝ որդու կյանքը: Նա արժանապատիվ մարտնչեց որպես իսկական հայ տղամարդ՝ պայքարելով մինչեւ վերջ…

2020թ. սեպտեմբերի 27-ին կամավոր միացել է հայրենիքի ազատության համար մղվող պայքարին, մեկնել է Մարտունի, ակտիվ մասնակցել ռազմական գործողություններին, դիմակայել թեժ եւ ծանր մարտերի:

Զոհվել է նոյեմբերի 3-ին Մարտունու պաշտպանության ժամանակ: Հուղարկավորվել է Եռաբլուրում: ԱՀ նախագահի հրամանագրով հետմահու պարգեւատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Շրջափակման մեջ հայտնված Արցախում գտնվող նրա հարազատները դեպի Եռաբլուր տանող միակ ճանապարհը փակ լինելու պատճառով չեն կարողանում շիրիմին այցի գնալ, գոնե այդպես փարատվել: Վրեժի ծնողների համար դժվար է համակերպվել սիրելի որդու բացակայության հետ: Մինչ ճանապարհը փակվելը ցանկացած առիթով կամ տոն օր գնում էին Եռաբլուր, որդու հետ էին անցկացնում օրը: Կորստի վշտից դառնացած ծնողների միակ մխիթարությունը Լեւոնն է՝ հերոսի զավակը, որին ամեն օր ուզում են տեսնել, շփվել, գուրգուրել:

Կինը՝ Իրինան եւ որդին՝ Լեւոնը, նոր բնակարան են ստացել, նյութական կարիք չունեն: Միակը, ինչի կարիքը որ ունեն, ամուսնու եւ հոր ջերմությունն է, որը, ցավոք, լրացնել հնարավոր չէ:

Քույրը՝ Լուսինեն, մեզ հետ զրույցում անկեղծանում է, որ անտանելի է կարոտի ցավին դիմանալը. «Նա ինձ համար իդեալական եղբայր է, մինչեւ հիմա էլ կա: Չեմ կարող նրա մասին անցյալով խոսել: Նա իմ լավագույն ընկերն է: Առանց նրա հետ խորհրդակցելու ոչ մի քայլ չեմ արել թե՛ աշխատանքի, թե՛ անձնական կյանքի առումով: Իմ առաջին խորհրդատուն ու ընկերն է: Ներկայում էլ ես նրա

հետ հոգեպես կապվածություն ունեմ, զգում եմ կապը նրա հետ, զգում եմ նրա ուժն իմ թիկունքում: Որեւէ որոշում կայացնելու դեպքում նա ինձ օգնում է, որ ճիշտ կողմնորոշվեմ: Երկու քույր ենք, երկուսիս համար էլ Վրեժը նախ ընկեր է, ապա՝ եղբայր: Մեր խնդրանքներն իսկույն իրագործում էր, եթե նույնիսկ դժվար էր լինում իր համար: Շատ էր նվիրված ընտանիքին, ծնողներին: Հավասարակշռված, ցանկացած հարցում սթափ կշռադատելու ունակ, որոշումներում հստակ ու կտրուկ մարդ…Համատեղ իրագործելու ծրագրեր ունեինք, որոնց մասին գիտենք միայն մենք, տարիներ են պահանջվում դրանք իրագործելու համար, բայց նպատակ եմ դրել, որ անելու եմ: Շատ եմ սիրում Լեւոնին, նա ինձ համար ե՛ւ եղբայր է, ե՛ւ եղբորորդի: Ամեն ինչ անելու եմ նրան իր նպատակներին հասցնելու համար:

Պատերազմի ժամանակ Վրեժը կապվում էր մեզ հետ, իհարկե, երբ իրեն հարմար էր լինում: Միշտ դրական էր խոսում, լավատեսորեն արտահայտում կարծիքը, առանց խուճապի, հանգիստ, մեզ էլ էր հանգստացնում: Ընդհանրապես մտքովս անգամ չէր անցնում, որ կարող է այսպիսի բան պատահել, որ զրկվեմ, բաժանվեմ եղբորիցս: Նրա զոհվելուց հետո կարծես թե աշխարհում մենակ եմ մնացել: Նա է իմ աշխարհը: Չեմ կարողանում համակերպվել նրա բացակայության հետ: Առավոտյան, երբ արթնանում եմ, բարեւում եմ նրան, երեկոյան քնելիս նկարի հետ զրուցում եմ, բարի գիշեր մաղթում: Չգտնում եմ շփվել այն մարդկանց հետ, որոնց հետ նա մտերիմ էր: Ընտանիքներով կապ ենք պահում նրա մտերիմ ընկերոջ հետ: Չափազանց դժվար է, անտանելի ցավ է եղբայր կորցնելը, այն էլ՝ այդպիսի թագավոր եղբայր: Դժվար է ցավը քո մեջ խեղդելով ապրել: Դժվար է շփվել մարդկանց հետ, զրուցել, անգամ ժպտալ: Բայց ինչ արած, դիմացինդ պարտավոր չէ զգալ այն, ինչ դու ես զգում, նա չի պատկերացնի, թե ինչքան խորն է վերքս: Շատ մեծ սթրես եմ տարել եղբորս կորցնելով: Պատերազմից մեկ տարի անց երեխա ունեցա: Կարելի է ասել, որ նա ինձ ուշքի բերեց եւ կյանք վերադարձրեց: Իմ մեջ ուժ գտա, ծնողներիս կողքին էլ պետք է ուժեղ լինեի, որ իրենք էլ չխելագարվեն: Օրվա մեջ թեկուզ մի քանի րոպեով էլ կարողանում եմ նրանց հետ զրուցել, դրական հիշողություններ արթնացնել, շեղել, բայց ցանկացած զրույց ավարտվում է տխրությամբ, թախիծով, վշտով, արտասվախառն: Շնորհակալ եմ մեր բարեկամներից, մորաքույրներիցս, հորս ընկերներից ու իմ ընկերներից, որոնք գտնվելով Հայաստանում՝ գնում են Եռաբլուր ու ծաղիկներ խոնարհում Վրեժի շիրմաքարին: Գոնե շիրիմին կարողանայինք այցի գնալ, ու խեղդող կարոտը մի քիչ թեթեւանար…»:

Հերոսի քույրը ցանկանում է ապրել Արցախում՝ իր ապագան տեսնելով միայն ու միայն ազատամարտիկների կյանքի գնով պահած հողի վրա: «Վճռական տրամադրվել եմ ու որոշել, որ սկզբունքորեն պետք է ապրեմ Արցախում: Վայրկյան անգամ չեմ մտածում դուրս գալ այստեղից, որքան էլ հավանական լինի ուրիշ տեղ բարեկեցիկ ապագա ունենալս: Ես նախընտրում եմ իմ եղբոր արյունով պահած հողում ապրել, թեկուզեւ՝ դժվարությամբ: Արցախը լքել՝ կնշանակի դավաճանել եղբորս ու մեր մյուս բոլոր հերոսներին, որոնք զոհել են իրենց կյանքը, որ մենք ապրենք հայրենիքում: Նրանց սուրբ արյունը ներծծված է այս հողին, սա ամենաթանկ հողն է ինձ համար»,- ասում է Լուսինեն:

ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

Փետրվարի 23-ին նշվող (ոչ օրացուցային տոն) Հայրենյաց պաշտպանի օրվան ընդառաջ՝ «Լուսարար»-ն անդրադարձավ քաջարի մարտիկների, որոնց կերպարները վեհ հատկանիշներով օժտված՝ հայրենիքի իսկական պաշպանի վեհանձնության մարմնացում են:

Մեր զրուցակիցը 2020 թվականի պատերազմում եղբայր ու ամուսնու եղբայր կորցրած Անի Սուլեյմանյանն է, որը մեզ տրամադրեց նահատակված հերոսների մասին տեղեկություններ: Ցավով տեղեկացանք, որ 2020 թվականի մահաբեր պատերազմում հոկտեմբերի 2-ին զոհվել է նրա մորաքրոջ տղան՝ Ենոք Դավթյանը, որը որպես հարազատ եղբայր էր նրա համար, իսկ մի քանի օր հետո՝ հոկտեմբերի 5-ին, զոհվել է նրա ամուսնու եղբայրը՝ հատուկջոկատային Սասուն Սուլեյմանյանը: Կորստի ծանր վշտին դիմանալու համար ամոքում չկա: Անիի եւ նրա պես շատերի համար սփոփանքը թերեւս հերոսների հիշատակը վառ պահելն է, ինչին ձգտում է նաեւ «Լուսարար»-ը:

ՍԱՍՈՒՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՍՈՒԼԵՅՄԱՆՅԱՆ

Ծնվել է 1981թ. հուլիսի 1-ին Ստեփանակերտում: Սովորել է Հովհաննես Թումանյանի անվան հ. 9 դպրոցում: Մասնագիտական հատուկ կրթություն չէր ստացել, բայց լավ տիրապետում էր տարբեր արհեստների, մասնավորապես՝ դարբնագործության: 2007թ. ամուսնացել էր: Ունի 3 երեխա:

Նրա մարտական ուղին բովանդակալից է, իսկ կերպարը՝ հայրենյաց պաշտպանի վեհ կոչմանն արժանի: 1999-2001թթ. ծառայել է ԱՀ ՊԲ շարքերում: 2005-2010թթ. կրտսեր սերժանտ Սասուն Սուլեյմանյանն անցել է ծառայության որպես պայմանագրային զինծառայող, հետո ծառայել Հատուկ նշանակության ջոկատում՝ զբաղեցնելով 4-րդ խմբի 2-րդ ջոկի հետախույզ-սակրավորի պաշտոնը: Զինվորական ծառայության ընթացքում իրեն դրսեւորել է դրական կողմերով: Բավականաչափ աշխատանք էր կատարում իր գիտելիքների հարստացման ուղղությամբ: Ֆիզիկապես զարգացած էր: 2010-ին դուրս է եկել ծառայությունից՝ ելնելով ընտանեկան պայմաններից եւ աշխատանքի անցել «Հիմնաքար» ՍՊԸ-ում: 2012-ին կրկին ծառայության է անցել ՊԲ շարքերում. հայրենիքին ծառայելը նրա տարերքն էր: 2016-ի ապրիլյան պատերազմին մասնակցել է մեծ խիզախությամբ եւ քաջաբար պայքարել հակառակորդի դեմ: Հետո աշխատանքի է անցել միջազգային ականազերծման կենտրոն «The HALO Trust» կազմակերպությունում որպես սակրավոր՝ զբաղեցնելով ջոկի հրամանատարի պաշտոնը: 2019-ից ծառայության է անցել ՊԲ-ում՝ որպես հատուկջոկատային: 2020-ի սեպտեմբերին սկսված պատերազմի առաջին իսկ վայրկյանից անձնվիրաբար մարտնչել է՝ փրկելով 16 կյանք: Նա վիրավորներ է տեղափոխել Մատաղիսից դեպի Մարտակերտ քաղաքի զինվորական հոսպիտալ, ինչի շնորհիվ փրկվել են զինվորների կյանքեր: Նահանջի ժամանակ վերջինն էր նահանջում՝ իր հետ հանելով վիրավորներին ու չխնայելով կյանքը: Նրա կատարած սխրանքների եւ գործերի մասին ավելին չեն պատմում գաղտնիության պատճառով: Հերոսաբար զոհվել է հոկտեմբերի 5-ին ԱԹՍ-ի հարվածից «Եղնիկներ» կոչվող դիրքերից վիրավորներ հանելիս:

Հետմահու պարգեւատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով եւ «Մարտական ծառայություն» մեդալով:

Արցախյան առաջին պատերազմի ժամանակ նույն տարիքում նույնպես հանուն հայրենիքի ազատության զոհվել է հայրը՝ Վլադիմիր Սուլեյմանյանը՝ արիությամբ կռվելով ոսոխի դեմ: Հայրը հետմահու պարգեւատրվել է «Շուշիի ազատագրման համար» մեդալով:

Սասունը կենսուրախ, կյանքով լի, ընկերասեր, աշխատասեր տղա էր: 13-14 տարեկանից աշխատում էր, որ մորն օգնի, միշտ թեւ ու թիկունք էր մայրիկի համար: Ասում էր, որ ամբողջ աշխարհը մի կողմում է, իսկ մայ-

ԱՆՄԱՀ ՀԵՐՈՍՆԵՐ

ՆՎԻՐՎԱԾ ՀԵՐՈՍԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

«Սերնդի ֆիզիկական, հոգևոր և մտավոր առողջությունը պետության ապագան կանխորոշող գործոններից կարևորագույնն է»:

Սևակ Խոյեցի

Փետրվարի 19-ին Երևանում՝ «Աշխատանք» մարզադպրոցում («ՀԱՅԱՍՏԱՆ» մարզական միություն) տեղի ունեցավ «Շվաք» ազգային մարտարվեստի ֆեդերացիայի կազմակերպած ազգային մարտարվեստի մրցաշար՝ նվիրված նույն ֆեդերացիայի հիմնադիր-նախագահ, մանկավարժ, մերօրյա անմահ հերոս Սևակ Խոյեցու (Մնացականյան) հիշատակին: Մինչ «Շվաք»-ի սաների ելույթները, հնչեց ՀՀ օրհներգը, եղավ լռության րոպե՝ ի հիշատակ Արցախյան բոլոր գոյամարտերում և ՀՀ սահմանում նահատակված հայոց քաջորդիների: Այնուհետև մշակութային մասով հանդես եկավ 1986թ. ստեղծված՝ Ռուդիկ Հարոյանի անվան «ՄԱՍՈՒՆՔ» ավանդական երգիպարի համույթը՝ Հայարփի Անանյանի և Լուսինե Մկրտչյանի գլխավորությամբ: «Շվաք» ազգային մարտարվեստի ֆեդերացիայի ներկայիս նախագահ, Սևակ Խոյեցու եղբայր և գործի շարունակող Մասիս Մնացականյանը շնորհակալություն հայտնեց ու շնորհակալագիր շնորհեց «Մասունք»-ի խմբին, որի կազմում ժամանակին հանդես էր եկել նաև Անմահության ճամփորդ Սևակ եղբայրը: Իրենց ելույթով ներկաներին ողջունեցին նաև «Շվաք»-ի մարմնամարզության խմբակի աղջիկ-սաները (գեղարվեստական ղեկավ.՝ Ռիմա Մաթևոսյան): Խմբակը ֆեդերացիայի նախագահի կողմից արժանացավ պատվոգրի՝ «Լավագույն ցուցադրական ներկայացմամբ հանդես գալու համար»: Ցուցադրական ելույթ ունեցան նաև ֆեդերացիայի ազգային մարտարվեստի ավագ խմբի մարզիկները՝ արժանանալով ներկաների ծափողջույններին ու հիացական խոսքերին: Ընթացքում Մ. Մնացականյանի կողմից պատվոգրով ու համապատասխան տեղի մեդալներով պարգևատրվեցին փոքր տարիքային խմբի՝ նախօրոք կայացած մրցույթում հաղթող տղաները և նրանց մարզիչ Արմեն Աբրահամյանը: «Շնորհակալություն ձեր կատարած աշխատանքի համար: Մեծ աշխատանք եք կատարել և հավատում եմ՝ կլինի շարունակական ու առավել արդյունավետ»,- խմբակի մարզիչին ու սաներին դիմեց Մ. Մնացականյանը: Մարզիչ Արմենը նույնպես շնորհակալություն հայտնեց իր սաներին լավ ներկայանալու համար, նրանց ծնողներին, որ վստահում են իրենց: Հիշեց «Շվաք»-ի հիմնադիր Սևակի խոսքերը. «Օտար մարտարվեստի ճյուղերը չեն կարող դաստիարակել և արդյունավետ փոխանցել իրենց դավանած աշխարհընկալումը: Մարտարվեստի գաղափարներն ու դավանած արժեքներն ընդունելու համար անհրաժեշտ է այդ ամենին հոգեհարազատ լինել: Հակառակ դեպքում, բոլոր մարտարվեստները կդառնան «կռվելու արհեստ» և ոչ միայն չեն կատարի դաստիարակչական գործ, այլ նաև կվտանգեն մարդկային առողջ ու քաղաքակիրթ փոխհարաբերությունները»:

Այնուհետև խմբի կողմից պատրաստված արձանիկ-հուշանվերը հանձնեց Մասիս Մնացականյանին՝ ի երախտագիտություն Սևակի գործը շարունակելու և հարյուրավոր մեր երեխաների մարզվելու հնարավորություն ընձեռելու համար և մաղթեց հետագա հաջողություններ: Մասիսը հուշանվերը բարձր գնահատեց՝ համարելով բոլորի միասնական աշխատանքի արդյունք:

Հանդիսավոր մասից, ցուցադրական ելույթներից հետո սկսվեց բուն մրցույթը, որը տևեց մի քանի ժամ: Սկզբում հանդես եկան ցածր տարիքային խմբերի սաները՝ կարմիր և կապույտ սաղավարտներով ու ձեռնոցներով (մրցավար՝ «Շվաք» ազգային մարտարվեստի ֆեդերացիայի մարզիչ Ալբերտ Գասպարյան): Մրցաշարի վերջում ֆեդերացիայի կողմից պատվոգրեր հանձնվեցին աջակիցներին: Մրցումները վարեցին նաև «Շվաք»-ի այլ մարզիչներ, նշված մարզաձևի գիտակներ:

Սևակ Խոյեցին ծնվել է 1988թ. փետրվարի 6-ին Կոտայքի մարզի Քաղսի գյուղում: Հարազատների, ընկերների, ծանոթների շրջանում հայտնի էր իր մարզական ու ազգային, մշակութային հաջողություններով, հայրենանվեր գործունեությամբ: 2020թ. հոկտեմբերի 19-ին Մարտակերտի Տոնաշեն գյուղի մոտ հերոսաբար նահատակվեցին «Մեծն Տիգրան» աշխարհազորային գնդի հետախուզական ջոկատի մարտիկներից Արթուր Հարությունյանը, Դավիթ Սարուխանյանը, Հարություն Ստեփանյանը, Սևակ Մնացականյանը (Սևակ Խոյեցի) և Տիգրան Ավագյանը, որը մինչ պատերազմը բնակվում էր Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր գյուղում և ուսուցչուհի մոր միակ զավակն էր: Մեր ժամանակների՝ ազգային ու պետական մտածողության երիտասարդներից էր Սևակ Բախշիի Մնացականյանը, որը կամավոր մեկնել էր առաջնագիծ և նահատակվելուց օրեր առաջ տեսաուղերձ էր հղել մեր ժողովրդին՝ նախազգուշացնելով, որ այսօրվան կհասնենք, եթե չլինի կազմակերպված ու համախմբված պայքար ընդդեմ թշնամու:

Մրցաշարին ներկա էին բազմաթիվ հյուրեր տարբեր բնագավառներից: «Եղբորս՝ Սևակ Մնացականյանի գերակա նպատակն էր բացահայտել և համախմբել ուժեղագույն մարզիկներ ազգային ոգու, մտքի, գաղափարի և մշակույթի շուրջ,- զրույցի ընթացքում ասաց Մ. Մնացականյանը,- և մեր պարտքն է իրագործել հայրենիքի պաշտպանության համար մարտիրոսված հերոսի երազանք-նպատակ-ծրագիրը»: Դահլիճում հանդիպեցի քաշաթաղցի Նարեկ Աղախանյանին, որը մինչև վերջերս ընտանիքով բնակվում էր Քաշաթաղի շրջանի Աղավնո գյուղում և ստիպված տեղափոխվել է Երևան: Որդին՝ այժմ Երևանի թիվ 11 հիմնական դպրոցի 5-րդ դասարանի աշակերտ Հրայրը, նույնպես մասնակցեց մրցաշարին և 45կգ քաշային կարգում գրավեց երրորդ տեղը: Հայրն ասաց՝ Հրայրն ընդամենը 3 ամիս է, ինչ մասնակցում է պարապմունքներին և արդեն ունի հաջողություն: Շնորհակալություն հայտնեց «Շվաք» ֆեդերացիայի նախագահին, մարզիչներին:

Մրցույթին ներկա Վլադիմիր Նիկողոսյանը, որը մշտապես հետևում է «Շվաք»-ի գործունեությանը, նշեց. «Ոգեպնդիչ ու կատարյալ աշխատանք է կատարվում»: «Շվաք»-ը համագործակցում է Հայաստանի Քունգ ֆուիթ ֆեդերացիայի և Արկադի Տեր Թադևոսյանի անվան «Կոմանդոս» ռազմամարզական ակումբի (նախագահ՝ Արցախյան պատերազմի հերոս Ոսկան Մարգարյան) հետ: Հիրավի մեծ աշխատանք է կատարվում: «Շվաք»-ի սաները հաճախ են նաև մասնակցում հայրենագիտական արշավների, այցելում ազգային հերոսների հուշարձաններ: Ամենակարևորը՝ հասակ են առնում, սնվում Սևակի ոգով:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

Խոսք հիշատակի

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐԻԻ ԱՂԱԲԵԿՅԱՆ

Կյանքի 50-րդ տարում երկրային կյանքին հրաժեշտ տվեց Քերթի Կոմիտաս Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Արարատ Գրիգորիի Աղաբեկյանը:

Արարատ Գրիգորիի Աղաբեկյանը ծնվել է 1973թ. հունվարի 12-ին Մարտունու շրջանի Քերթ գյուղում: 1990թ. ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը և նույն թվականին աշխատանքի անցել Կավահանի ութամյա դպրոցում՝ որպես պատմության ուսուցիչ: 1998թ. ընդունվել է Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Բանասիրություն և հոգեբանություն» բաժինը: 1999 թվականից աշխատում էր հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

Արարատ Աղաբեկյանը սիրում էր իր մասնագիտությունը, մեծ պատասխանատվությամբ ու սիրով էր սաներին տալիս հայոց լեզվի անսպառ գանձերը: Նա խստապահանջ, միևնույն ժամանակ հոգատար ու սրտացավ ուսուցիչ էր: Վայելում էր աշակերտների, գործընկերների սերն ու հարգանքը: Իր պարտքն էր համարում սերունդներին պատգամել հայոց լեզուն անաղարտ պահելու և պահպանելու գաղափարը և դաստիարակել հայրենասեր, հոգով արի, տոկուն սերունդ:

Արցախյան շարժման ակտիվ մասնակիցներից էր: Մասնակցել է նաև Արցախյան քառօրյա և 44-օրյա պատերազմներին:

Քերթի Կոմիտաս Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցի ողջ անձնակազմը խոր վիշտ է ապրում անգնահատելի ընկերոջ, մեծ նվիրումով ուսուցչի անժամանակ մահվան կապակցությամբ:

Ցավակցում և մեր վշտակցությունն ենք հայտնում ընտանիքի անդամներին ու հարազատներին:

Քերթի Կոմիտաս Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցի կոլեկտիվ

Գրիգորյանի հետ տեղափոխվել է Վարդենիսի շրջանի Փոքր Մասրիկ գյուղ: Մեծ դժվարությամբ միայնակ մայրը մեծացրել է Ենոքին: Սովորել է Փոքր Մասրիկի միջնակարգ դպրոցում: Սովորելու ժամանակ աչքի էր ընկնում խելացիությամբ, համեստությամբ ու աշխատասիրությամբ: Ենոքը 14-15 տարեկանում աշխատում էր դաշտում եւ օգնում մորը: 2003 թվականին ավարտել է դպրոցը: 2006-2008 թվականներին ծառայել է ՊԲ-ում: Ծառայության ընթացքում իրեն դրսեւորել է բավականին լավ: 2010 թվականին ընդունվել է ՊԲ զինված ուժերի շարքեր՝ որպես պայմանագրային զինծառայող: Ծառայել է Օմարի բարձունքում: 2016 թվականին մասնակցել է ապրիլյան պատերազմին՝ քաջարի կռվելով: 2020-ի սեպտեմբերի 27-ին պատերազմն սկսվելու մասին լուրն իմանալուն պես մեկնել է ռազմաճակատ հենց իր ծառայելու դիրքը՝ Օմարի բարձունք: Սեպտեմբերի 29-ին վիրավորվել էր ձեռքից, բայց չլքեց մարտական ընկերներին, մնաց նրանց կողքին: Մարտական ընկերները պատմում են, որ Ենոքը կպչուն ժապավենով կապել էր ձեռքը ու չլսեց ոչ մեկին, չիջավ դիրքից: Հերոսաբար ընկավ հոկտեմբերի 2-ին:

Հետմահու պարգեւատրվել է «Արիության մեդալ»-ով:

Ենոքի մայրը մեծ ցավով պատմում է նրա մասին: Մանկության տարիներին, երբ դուրս էր գալիս բակ խաղալու, կոնֆետ էին տալիս, վազելով բերում կիսում էր մոր հետ, իսկ եթե մայրը չէր ուտում, ինքն էլ չէր ուտում: Մայր ու որդի միասին իրար օգնելով, իրար թեւ ու թիկունք տալով՝ տուն սարքեցին, ապրուստ ստեղծեցին: Ենոքն ամուսնացավ հարսանիքով:

Շատ էր սիրում բանակը, շատ պարտաճանաչ էր: Հարեւանները պատմում են, որ առավոտ ժամը 5-ին լույսը բացվելուն պես գնում էր կարտոֆիլի դաշտ աշխատելու, իսկ առավոտ ժամը 8-ին համազգեստը հագած, կոկիկ տեսքով սպասում էր, որ մեքենան գար, ու ինքը գնար ծառայության: Ուշանալ չէր սիրում:

Անին ասում է. «Ենոքի մասին կարող եմ անվերջ խոսել: Շատ սրտացավ, հոգատար եղբայր էր նա: Ճիշտ է, նա իմ մորաքրոջ որդին է, բայց մենք շատ կապված էինք իրար հետ՝ որպես հարազատ քույր ու եղբայր: Նրա հետ կարելի էր ցանկացած թեմայով խոսել, կիսվել: Շատ բարի էր: Շատ էր սիրում երեխաներին: Ցավոք, նրա երկրորդ երեխան, որին իմ անունն էր դրել, երկու ամսականում մահացել էր: Մյուս երկու դուստրերը՝ Ալինան եւ Էլինան, մեծանում են առանց հոր, ինչպես որ Ենոքն էր մնացել առանց հոր խնամքի: Դժվար կյանք է ունեցել Ենոքը, բայց միշտ էլ մնացել է բարի ու հոգատար: Նա իմ ամենալավ եղբայրն է, իմ սրտի մի կտորը, եւ քանի ես կամ, նրա անունը վառ եմ պահելու»:

Հայրենյաց պաշտպաններ Սասուն Սուլեյմանյանի եւ Ենոք Դավթյանի հիշատակն անմար է եւ հիշվելով սերնդեսերունդ՝ միշտ մնալու է որպես անձնվիրության, մարդկային բարձրագույն հատկանիշների եւ հայրենիքը կյանքից էլ վեր դասելու խորհրդանիշ: Փա՛ռք ու պատի՛վ մեր հայրենիքի պաշտպաններին:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՃԻՇՏ ՃԱՆԱՊԱՐՀ

ՀՈՒՍԱՆՔ ԵՎ ՀԱՎԱՏԱՆՔ

Ստեփանակերտի փողոցներից մեկում՝ հողածածկ տարածքում վերջերս տեղադրվել է նարնջագույն մետաղյա տուփ և ցանկապատվել մետաղացանցով: Հետաքրքիր էր իմանալ՝ ինչ է դա և ինչ նպատակով է տեղադրվել: Մի քանի օր առաջ տեսա, որ երկու տղամարդ կապույտով ներկում են ցանկապատը: Հետաքրքրությունս բավարարելու համար այդ հարցն ուղղեցի նրանց, ու նրանցից մեկը զրույցի մեջ մտավ ինձ հետ: Ներկայացնում եմ մեր երկխոսության նրա մասը՝ որպես դիմանկարի շտրիխ:

- Սա գեներատոր է, որը կաշխատի վառելիքով: Դրանից մեկ տասնյակից ավելի տեղադրել ենք քաղաքում գտնվող արտեզյան ջրհորների մոտ, որպեսզի եթե հանկարծ էլեկտրական հոսանքն ընդհանուր անջատվի, դրանք ավտոմատ միանան, և ջրամատակարարումն անխափան լինի, բնակչությունը ջրի խնդիր չունենա: Ժողովուրդը թող չմտահոգվի, որ էլեկտրական լույս չլինելու դեպքում կարող է զրկվել ջրից: Սարքը բերել-տեղադրել են, էլեկտրիկն իր գործն է արել, ցանկապատողն՝ իր, ես էլ իմ գործն եմ անում, ներկում եմ, որ և՛ աչքի համար գեղեցիկ լինի, և՛ ամենակարևորը՝ պաշտպանված ժանգից, քայքայումից:

Ջուրը կյանքի խորհրդանիշն է: Աստծո խոսքն էլ կենդանի ջուր է մեզ համար: Իսկ Աստծո խոսքն ասում է, որ եթե լավ բան ենք ուզում, լավ ժողովուրդ պետք է լինենք: Իսկ լավ ժողովուրդ ասելով պետք է հասկանալ, որ նա հեռու է հայհոյանքից, նախանձից, բամբասանքից: Աստծո ուզած ժողովուրդը պետք է լինենք, որ սպասենք նրա օգնությանը:

Իսկ որպեսզի Աստված մեզ օգնի, պետք է նրա ուզածով ապրենք. եկեղեցի հաճախենք, մեղա գանք, ներողություն խնդրենք, ներում ստանանք: Այս աշխարհի աստվածը անօրեն մամոնան է՝ փողը, բայց մեր Աստվածը պետք է Հիսուս Քրիստոսը լինի, Սուրբ Երրորդությունը, որպեսզի ամենակարողը մեզ հետ լինի, ու մենք նրա անունով հաղթենք:

Աստված ասում է՝ կամ ջերմեռանդ քրիստոնյաներ եղեք, սուրբ, արդար, կամ էլ ընդհանրապես սառը եղեք: Աստված չի ընդունում գոլ վիճակը: Մենք հիմա գոլ վիճակում ենք: Տեսեք՝ թուրքերը պաշտում են սատանային (եթե Հիսուս Քրիստոսը չէ այդ Աստվածը, ուրեմն՝ նա սատանա է) ու գալիս են նրա անունով: Իսկ սատանան ավելի զորավոր է, քան մարդը: Մենք եթե մեր անունով ենք գնում, պարտվում ենք: Աստծո՝ Հիսուս Քրիստոսի անունով պիտի գնանք, որ հաղթենք, որովհետև Նա է միակ Աստվածը, ուրիշ Աստված չկա: Սա չի նշանակում, թե գիշեր-ցերեկ միայն պիտի աղոթենք, Նրա անունը տանք, բայց պարապ-սարապ նստենք: Դա աստծվածահաճո չէ: Աստծո անունով գնալու համար նրա նման պիտի ապրենք:

Ամեն մարդ իր գործը պիտի անի, դրա հետ միասին միշտ Աստծո ուզածով լինի, այսինքն՝ իր գործը ճիշտ անի, մաքուր անի, ամենալավ ձևով անի, քաջ լինի, զորավոր լինի:

Զորավոր մարդ ասելով ֆիզիկական ուժը չպետք է հասկանալ: Նշանակում է՝ հոգով սուրբ մարդ լինել, կամեցող լինել:

Մարդու համար ամենակարևորը ինքնության արդարացումն է: Ով ուզում է նա լինի,

որ ազգից էլ ուզում է լինի: Ես հայ եմ, ու իմ հայությունը պիտի պաշտպանեմ, արդարացնեմ: Քանի որ հիմա ամենադժվար տեղում Արցախի հայերն են, ես պիտի նրանց՝ իմ եղբայրակիցների հետ լինեմ: Ինքնության արդարացում, այսինքն՝ իզուր չեմ ծնվել, պետք է արդարացնեմ իմ ծնունդը:

2020թ. դեկտեմբերին եմ Հայաստանից եկել Արցախ, մտել շինարարության մեջ: Արցախի ժողովուրդը համառ է: Դեռ 1982 թվականից եմ ճանաչում, երբ Երևանի պոլիտեխնիկն ավարտելուց հետո եկա այստեղ՝ զինվորական եռամսյա հավաքս անցկացնելու: Հետո 90-ականների Արցախյան առաջին պատերազմի ժամանակ էի այստեղ որպես դասակի հրամանատար՝ ավագ լեյտենանտի կոչումով: Հաղթանակից հետո զորացրվել եմ, 1994-ին մտել եմ շինարարություն Հայաստանում: 2016թ. ապրիլյան պատերազմին դարձյալ այստեղ էի, ավագ որդիս՝ նույնպես, հակաօդային պաշտպանությունում էր, ճարտարագիտական համալսարանի 3-րդ կուրսի ուսանող էր: 2020թ. պատերազմին իմ միջնեկ տղան է մասնակցել, ժամկետային զինծառայող էր, ծանր հրետանավոր է եղել, Զաբրայիլից հասել է Մարտունի, 44-օր՝ մինչև պատերազմը կանգնեցնելը կռվել է, վիրավորվել: Ես չեմ կարողացել մասնակցել, ընկել էի, ոտքս ուռել էր, մինչև լավացավ, կռիվն ավարտվեց: Իմ պարտքը համարեցի, որ գոնե դրանից հետո գամ և արցախցիների կողքին լինեմ, իմ աշխատանքով օգտակար լինեմ ու մտա շինարարություն:

Հիմա բլոկադայի պատճառով Արցախում շինարարությունը կանգնած է: Դիմեցի, որ մեկ այլ աշխատանք տան, մինչև այս վիճակը կարգավորվի: Ուղարկեցին «Զրմուղ-կոյուղի»: Ինչ աշխատանք հանձնարարում են, կատարում եմ, ուր ուղարկում են, գնում եմ: Դիմել եմ, որ նաև դիրքեր ուղարկեն: Կարևորը, որ մի բանով օգտակար լինեմ, իմ աշխատավարձով իմ սնունդը, հագուստն ապահովեմ, երեխաներիս ուղարկեմ: Չորս երեխա ունեմ, որոնցից երկուսը ուսանող են Երևանում:

Ես ուրիշ կերպ չեմ կարող մտածել: Մենք պայքարում ենք, որ Աստծո օգնությամբ հաղթանակ ունենանք: Մենք երբեք պատերազմ չենք սկսել, մեզ վրա միշտ հարձակվել են, մենք պաշտպանվել ենք, որի իրավունքը Աստված է տվել: Եթե ուզում են մեզ սպանել, Աստված չի ասում՝ մի՛ պաշտպանվիր: Ինքն էլ է մեզ օգնում, եթե մենք իր ուզած մարդը լինենք, Աստծո հրեշտակները նույնպես կարող են գալ և մեզ օգնել:

Բացասական արդյունքի ես չեմ կարող սպասել: Մեր ժողովրդի (Արցախ-Հայաստան ես միասին եմ ընկալում) այս վիճակը տեսնելով՝ ոմանք ասում են, թե Աստված մեզ պատժում է: Մե՛նք ենք մեզ պատժում: Աստված ուղղակի թույլ է տալիս: Մարդն իր խելքով գնում, ընկնում է փոսը, հետո ասում՝ վա՜յ, Աստված ջան, այս ի՞նչ եղավ: Իսկ Աստված ասում է՝ իսկ դու ինձ ե՞րբ լսեցիր…

Հիմա արդեն գիտենք մեր սխալները որտեղ են եղել: Այնքա՜ն բան կա ասելու… Հիմա աշխարհը պատրաստվում է հակաքրիստոսի՝ նեռի գալստյանը, որովհետև շատ մարդիկ (բոլորը չէ, որ հասկացել են Տիրոջը, ընդունել նրա «Ես եմ ճշմարտությունը, կյանքը և ճանապարհը» խոսքը) հիմա փողն են սիրում, սիրուն աղջիկներ, ռեստորաններ… Նրանք հեռուն չեն տեսնում, միայն իրենց դեմն են տեսնում՝ սա ուտեմ, սա խմեմ, այս մեքենան քշեմ: Նրանք չեն տեսնում, որ ում հաշվին ուտում-խմում են, պատասխան պիտի տան: Ամեն մեկը նույնիսկ իր պարապ խոսքի համար պատասխան պիտի տա: Նույնիսկ մի պարապ խոսքի համար, ո՜ւր մնաց մարդ սպանել, սուտ խոսել… Պետք չէ, որ ես սպասեմ ու տեսնեմ, թե երբ է դա լինելու: Ես հավատում եմ, որ դա լինելու է անպայման: Այդ հավատը պետք է անսասան լինի: Հուսահատությունը ծանր մեղք է, մենք չպե՛տք է հուսահատվենք: Աստվածավախ մարդը մահից չի վախենում: Ինչո՞ւ, քանի որ հարության հույս ունի: Նահատակությունը ամենաբարձր պսակն է: Մեկը եթե հայրենիքի, սրբության համար է նահատակվում, արժանանում է ամենաբարձր պսակին:

Ինքներդ որ վատը դատապարտում եք, ուրեմն՝ վատը մի եղեք: Այն լավը, որ ուրիշից ես սպասում, ինքդ այդպիսի՛ն եղիր, մենք բոլորս դրան պիտի ձգտենք: Ամենակարևորը՝ սեր: Սերն այն է, որ դու դիմացինի բարին ես կամենում, միայն քո շահը մի փնտրիր, դիմացինիդ շահն էլ փնտրիր:

Այդ հավատով սպասում ենք, որ արդարությունը պիտի գա, բայց ամեն մեկը իր տեղում պիտի ճիշտ լինի: Խոսում են Աստծո անունից ու հակառակն անում: Դու նրանց մի՛ նմանվիր, դու ուրիշի հետ գործ չունես, դու որը գտնում ես լավ է, ճիշտ է, այն արա: Մարդ երբ բավարարված է լինում, ոչնչի չի նայում: Ընդ որում, ով որ շատ ունի, մեղքի հաշվին է շատ ունենում: Երջանիկ է այն մարդը, ով իր ունեցածով է բավարավում:

Ընդհանրապես ո՞վ է նախանձում: Այն մարդը, որը մտածում է, որ ինքը քիչ ունի, իսկ հավատացյալը չի մտածում, որ քիչ ունի, նա գիտի, որ հավիտենական կյանք ունի: Աստված ասում է՝ կերակուր և հանդերձ ունենալով՝ բավարարվեք: Ասում է՝ տեսեք թռչուններն ի՜նչ ազատ են. չէ՞ որ մարդն ուզում է թռչունի պես լինել՝ կերակուր և հանդերձ ունենալ ու ասել՝ փա՛ռք քեզ, Տեր:

Երբ որ դու լիարժեք սիրում ես Աստծուն, վստահում ես նրան, Նա գալիս է բացվում քո առաջ:

Դե՝ ուրեմն հուսանք և հավատանք:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հ.Գ. Իմ զրուցակիցը Մեսրոպ ԹԱՄԱՄՅԱՆՆ է՝ Հայ առաքելական եկեղեցու հետևորդ

ԱՄԵՆ ՎԻՃԱԿ ԻՐ ՊԱՅՄԱՆՆ ՈՒՆԻ

Դրախտում էի՞նք, լա՞վ էր… Միակ պայմանն Աստծուն հնազանդ լինելն էր: Չստացվեց: Պայմանը խախտվեց, խնդրեմ՝ արտաքսում:

Ընտանիք ունե՞ս. սիրող ամուսին, երեխաներ… լավ է՞ ամեն բան: Պայմանը մեկն է՝ անդավաճան սեր: Խախտեցի՞ր, էլ չունես այն, ինչ ունեիր. արտաքսում:

Հայրենիք ունե՞ս: Լավ է՞ ամեն բան: Սիրում ե՞ս քո հայրենիքը: Ուրախ ե՞ս, որ քո հայրերի երկրից գոնե մի մասը կարողացել ես պահել, շատ լավ: Սա էլ պայման ունի. հայրենիքը սեփական տան ու բակից ավելի շատ սիրել: Ու գործնական, կոնկրետ քայլերով և ո՛չ թե օդի մեջ: Կպահե՞ս պայմանը, քո տան պես կվարվե՞ս քո հայրենիքի բոլոր անկյունների հետ, ավելին կունենաս. քո տանից դուրս ամեն բանի վրա թքած կունենաս, ուրեմն պայմանը չես պահել. արտաքսում:

Ու մենք սրա մեջ ենք հիմա: Քանի դեռ չենք ընդունել, որ մեր պատվիրանազանց ու պայմանավորվածություն չպահելու հետևանքով ենք հասել էս օրվան, ոչինչ էլ չի փոխվելու: Իսկ Աստված հետդարձի հնարավորություն տվել է ու շարունակում է տալ:

Պարզապես պետք է գիտակցել նաև, որ այդ արտաքսումը կարող է շատ ավելի մեծ չափերի հասնել: Ամեն գնով, որ պահին էլ լինի, կանգ առնել է պետք: Ու հետ դառնալ դեպի Տերը, դեպի Ընտանիք, դեպի Հայրենիք:

Մարկոս քահանա ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ-ՄԵԾ ՊԱՀՔ

Այս տարվա փետրվարի 19-ին Հայ Առաքելական Եկեղեցին նշեց Բուն Բարեկենդանը, որին հետևում է տարվա ամենաերկար տևող պահոց շրջանը, որը տևում է Բուն Բարեկենդանից մինչև Սուրբ Զատիկ՝ 49 օր: Փորձենք պարզաբանել ինչ է պահքը, ինչ աստվածաշնչային հիմքեր ունի, ինչու և ինչպես պետք է պահք պահել:

Բարեկենդան՝ նշանակում է բարի կենդանություն. ուրախության, խրախճանքի օր, որին հաջորդում են պահքի օրեր: Բուն Բարեկենդանը ամենաերկարատև պահքին նախորդող բարի կենդանության՝ խրախճանքի օրն է: Այն նվիրված է դրախտի հիշատակին և մեզ հիշեցնում է մարդկային առաջին երջանկությունը, երբ մարդը դեռևս անմեղ ու երջանիկ կյանքով ապրում էր դրախտում և վայելում Աստծո ներկայությունը: Առաջին մարդը դրախտում Տիրոջից պատվիրան ստացավ. «Դրախտում ամեն ծառի պտուղներից կարող ես ուտել, բայց բարու և չարի գիտության ծառից չուտես» (Ծննդոց 2:16-17): Այս պատվիրանի մեջ ամեն ծառից ուտելը խորհրդանշում է բարեկենդանը, իսկ մեկից չուտելը՝ պահքը:

Ի՞ՆՉ է ՊԱՀՔԸ

Մեր ժամանակակից սերունդը պահեցողություն ասելով, թերևս, հասկանում է կենդանական ծագում ունեցող կերակուրներից հրաժարում: Սա, սակայն, պահքի մասին այժմեական ըմբռնում է, ի սկզբանե այդպես չի եղել: Ըստ Աստվածաշնչի, պահեցողությունը սգի և ցավի մի շրջան է, ինքնազրկանք կամ ինքն իրեն տրված կամավոր պատիժ, որն իրագործվում էր որոշ ժամանակ ուտելուց և խմելուց, ինչպես նաև հաճույքից ամբողջովին հրաժարվելով: Կարևորը վերջին հանգամանքն է, այսինքն՝ նաև հաճույքի՛ց հրաժարվելը, քանզի պահքը և հաճույքն իրար հակադիր երևույթներ են, և, հետևաբար, պահեցողություն, որին ընկերանում են նաև խաղը, ուրախությունը և պարը, երևակայել անհնար է:

Ուրեմն՝ կրոնական նպատակով ինքն իրեն որևէ զրկանք պարտադրելը պահեցողություն է:

Պահքից անբաժան էր աղոթքը: Ս. Գրքում պահքի մասին տրվող հրահանգների հետ միաժամանակ հանձնարարվում է աղոթք: Երբ մարդիկ պահեցողություն են անում, միաժամանակ կիրառում են նաև աղոթքը: Ս. Գրքում ասված է. «Բարի են աղոթքները՝ պահեցողություններով» (Տոբիթ 12: 8), մեկ այլ տեղում. «Բայց այս տեսակ դևը (այսինքն՝ արմատացած հոգեկան բարդույթները և կատաղի մոլությունները) այլ կերպ դուրս չի ելնում, եթե ոչ աղոթքով ու ծոմապահությամբ» (Մատթ. 17:20):

Պահեցողություն էին անում նաև որևէ կարևոր նպատակի հաջողության համար: Ըստ այսմ, երբ Եսթեր թագուհին, հակառակ պալատի օրենքներին, որոշեց, կյանքը վտանգի ենթարկելով ներկայանալ թագավորին՝ իր ժողովրդի փրկությունը հայցելու համար, մարդ ուղարկեց իր ազգական Մուրթքեի մոտ՝ ասելով. «Դու գնա՛ և հավաքի՛ր Սուսա քաղաքում եղած հրեաներին, ինձ համար ծո՛մ պահեցեք և երեք օր՝ ո՛չ ցերեկը, ո՛չ գիշերը չուտեք ու չխմեք, իսկ ես և իմ նաժիշտները նույնպես ծոմ կպահենք: Ապա ես կմտնեմ արքայի մոտ...» (Եսթեր 4:16):

Պահքը, սակայն, հետզհետե ավելի կիրառելի դարձավ իբրև ապաշխարանքի նշան և արտահայտություն: Սրա ամենավառ օրինակը գալիս է նինվեացիներից: Երբ նրանք Հովնան մարգարեից իմացան, թե քաղաքն իրենց ամբարշտության պատճառով պիտի կործանվի, «նինվեացի մարդիկ հավատացին Աստծու պատգամին, պահեցողություն հայտարարեցին և մեծից մինչև փոքրը քուրձ հագան: Լուրը հասավ նինվեացիների թագավորին: Սա ելավ իր գահից, հանեց իր պատմուճանը, քուրձ հագավ և նստեց մոխրի վրա: Թագավորի ու նրա մեծամեծների կողմից Նինվեում հայտարարվեց ու ազդարարվեց, թե մարդ և անասուն, հոտ և արջառ թող ոչինչ չուտեն, չճարակեն և ջուր չխմեն: Եվ մարդ ու անասուն քուրձ հագնեն, ի սրտե աղաղակեն Աստծուն, բոլորը հետ կանգնեն իրենց չար ճանապարհներից և անօրենություններից, որ իրենց ձեռքով էր կատարվում: Ով գիտե, թերևս Աստված միտքը փոխի և հետ կանգնի իր խիստ բարկությունից, և կորստի չմատնվենք» (Հովնան 3: 5-9):

Պահքի ներկա ձևին, այսինքն՝ համեղ կերակուրներից և մսեղենից հրաժարվելու սովորությանը, առաջին անգամ հանդիպում ենք Դանիելի մարգարեական գրքում, ուր ասված է. «Այդ օրերին ես՝ Դանիելս, երեք շաբաթ սուգի մեջ էի: Լավ հաց չկերա, միս և գինի չմտավ իմ բերանը, յուղով չօծվեցի, մինչև որ վերջացան երեք շաբաթները» (Դան. 10: 2-3):

Հին Կտակարանի մեծ պահեցողներից առաջինը մեզ ներկայանում է նույն ինքը՝ Հին Ուխտի մեծագույն մարգարեն. Սինա լեռան վրա «Մովսեսը Տիրոջ հետ էր քառասուն օր և քառասուն գիշեր: Նա հաց չկերավ, ջուր չխմեց» (Ելք 34: 28): Եղիա մարգարեի մասին էլ է հաստատվում, որ քառասուն օր պահեցողություն է արել (Գ Թագ. 19: 8):

Հին Ուխտում շատ կան պահեցողության այսպիսի դրվագներ, և երբ մտնում ենք Նոր Կտակարանի ավելի լուսավոր շրջան, տեսնում ենք, որ պահքի սովորությունը շարունակվում է նաև այստեղ: Նոր Ուխտի առաջին պահեցողը մեր Տեր Հիսուս Քրիստոսն է, որն իր գործունեությունն սկսելուց առաջ անցել է պահեցողության շրջան: Իր մկրտությունից հետո Հիսուսը «Հոգով անապատ առաջնորդվեց ու քառասուն օր փորձվեց սատանայից: Չկերավ և չխմեց այն օրերին» (Ղուկ. 4: 1-2):

Մեծ պահքի հիմքում ընկած է հենց մեր Փրկչի՝ վերևում հիշված 40 օրերի ծոմապահությունն անապատում:

«Լեռան քարոզում» մեր Տերը կարևոր տեղ է տալիս նաև պահքին: Այնտեղ Հիսուսն ասում է. «Երբ ծոմ պահեք, տրտմերես մի՛ լինեք կեղծավորների նման, որոնք իրենց երեսները այլանդակում են, որպեսզի մարդկանց այնպես երևան, թե ծոմ են պահում. ճշմարիտ եմ ասում ձեզ, ա՛յդ իսկ է նրանց վարձը (այսինքն՝ մարդկանց երևալը և նրանցից գովվելը): Այլ երբ դու (խոսքն ուղղված է Հիսուսին հավատացողին և հետևողին) ծոմ պահես, օծի՛ր քո գլուխը և լվա՛ քո երեսը, որպեսզի չերևաս մարդկանց որպես ծոմ պահող, այլ քո Հորը՝ գաղտնաբար, և քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ» (Մատթ. 6: 16-18):

Ուրեմն, Հիսուսը, առանց ընկնելու պահեցողության գործնական մանրամասնությունների մեջ, սովորեցնում է, թե ինչ ոգով պետք է այն կատարել:

ՊԱՀՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Ինչո՞ւ ենք պահք պահում. կարևոր մի հարց, որին տրված պատասխանից կախում ունեն մեր պահեցողության կրոնական արժեքը և իմաստ ունենալ կամ չունենալը: Հարցին պատասխանելը դյուրացնելու համար ասենք, որ շատ սերտ զուգահեռ կա հիվանդության համար սահմանված ռեժիմի (սնուցակարգ) կամ դիետայի և կրոնական պահեցողության միջև՝ թե՛ նպատակի և թե՛ մեթոդի տեսակետից: Պահքի դերը և նպատակը հստակեցնելու համար ասենք, որ ինչ հիվանդությունն է մարմնի համար, նույնը մեղքն է հոգու համար: Հիվանդությունը մարմնի ֆիզիկական ներդաշնակ գործունեությանը խանգարող գործոն է, իսկ մեղքը՝ հոգեկան կյանքի մեխանիզմին:

Պահքի նպատակը հոգու կյանքը զորացնելն է՝ տկարացնելով զգացական հաճույքների քաշող ուժը: Պահեցողության գերագույն նպատակն ապաշխարանքն է, այսինքն՝ պահքը մեղքից և հոգեկան ծուլությունից ազատագրվելու ճիգ է, այդ իսկ պատճառով ունի ինքն իրեն տրված պատժի հանգամանք: Ապաշխարանքի էությունը մեղքի պատճառով զգացած ցավը, զղջումը և մտահոգությունն են այն պարզ պատճառով, որ մեղքն անհատի և հասարակության մեծագույն չարիքն է և մեզ Աստծուց բաժանող միակ պատճառը, աստվածային ու մարդկային մի շարք թանկագին շնորհներից ու ուժերից մեզ զրկող միակ ազդակը: Արդ, մեղքի հետևանքով զգացած ներքին ցավի արտաքին արտահայտություններից գլխավորը պահեցողությունն է, որը մեղավորին պատժի ենթարկելու և մեղքի ավերների առաջն առնելու արարք է:

Որոշ հիվանդություններ մահացու են, այսինքն՝ եթե իրենց սկզբնական շրջանում չբուժվեն, վաղահաս մահվան պատճառ կլինեն: «Մահացու» կոչված մեղքեր էլ կան. օրինակ՝ ամբարտավանությունը, չար նախանձը, ջղագար բարկությունը, անսահման ագահությունը և սրանց տարատեսակները: Սրանք մահացու են, որովհետև մարդու մեջ մեռցնում են բարոյական գիտակցությունը, մարդկային արժանապատվությունը և, ի վերջո, այլասերում մարդու նկարագիրն ու բնությունը: Երբ մարդը զրկվում է բարոյական արժեքներից, դադարում է բառի իսկական իմաստով մարդ լինելուց:

Արդարև, մարդուն կենդանական աշխարհի մյուս տեսակներից զանազանողը ոչ այնքան նրա ֆիզիկական տարբերություններն են, որքան՝ բարոյական գիտակցությունը, խիղճը, Աստծուն ճանաչելու և Նրան դիմելու կարողությունը:

Այս և մարդկային ուրիշ ազնիվ հատկություններ էլ վերոհիշյալ մահացու մեղքերից կտուժեն, կայլասերվեն, մինչև իսկ իսպառ կփչանան, եթե դրանց առաջը չառնվի: Եվ պահքը մեծապես նպաստում է այլասերիչ այս հակումների առաջն առնելուն, ինչպես նաև մարդուն հատուկ վերոհիշյալ կարողությունները պահպանելուն:

Սակայն պետք է շեշտել, որ պահեցողությունը չէ, որ մեղքը քավում է: Աստված է քավիչը:

Սակայն պահեցողությունը կարևոր մի օժանդակություն է քավչարար այս սրբագործության մեջ: Զղջումը, աղոթքը, ապաշխարանքը, որոնք պահեցողությունից անբաժան պետք է լինեն, այն հիմնական պայմաններն են ստեղծում, որտեղ Աստծո բուժիչ և քավիչ զորությունն է գործում:

Ս. Օգոստինոս Ավրելիոսն ասել է. «Պահեցողությունը մաքրում է հոգին, բարձրացնում միտքը, չափի և հակակշռի ներքևում պահում կրքերը, ցրում է ցանկության ամպերը, մարում սեռական կրակը, արծարծում է ժուժկալությունը և վառում ճշմարտության լույսը»:

Արդարև, անկեղծ և առողջ պահեցողության մեջ քրիստոնյան կարող է գտնել ազդու միջոցներից մեկը՝ վերատիրանալու այն բարոյական կորուստներին, որոնց ենթարկվել է չափազանց արձակ ապրելակերպով: Վերաշահում է այն շնորհները, որոնցից զրկված էր իր մեղքերի պատճառով:

Ժամանակակից մարդկությունը գերազանցել է նախորդ սերունդներին ոչ միայն իր թվով ու տեխնիկական առաջադիմությամբ, այլ նաև ամբարշտությամբ և Աստծուց հեռացած լինելու անչափելի ծավալով: Դեպի ստույգ և անխուսափելի կորուստ առաջնորդող այս ճանապարհից ազատվելու միակ միջոցը «պահքով և լալով», այսինքն՝ ապաշխարանքով ու աղոթքով, «ամբողջ սրտով» ետ՝ առ Աստված դառնալն է:

Կրոնական պահեցողությունն ունի նաև անուղղակի բարիքներ, որոնք ոմանք տգիտաբար համարում են պահքի նպատակ: Ցորենի հետ անպատճառ նաև հարդ է արտադրվում, որը բոլորովին էլ դեն նետվելիք բան չէ, անասուններին իբրև կեր է ծառայում: Բայց ոչ ոք ցորեն չի մշակում հարդ ստանալու համար: Ծիրանի հետ կա նաև նրա կորիզը, որը նույնպես անպետք բան չէ, սակայն ոչ ոք ծիրանի ծառ չի տնկում կորիզի համար: Պահքի անուղղակի բարիքներից են, օրինակ, ֆիզիկական օգտակարությունը՝ հատկապես մեր ժամանակներում, երբ մարդիկ պետք եղածից ավելի են ուտում, և մարմինն իրեն անհրաժեշտ եղածից ավելի է նյութեր ստանում, որոնք ճարպի ձևով զետեղում է իր զանազան մասերում՝ իզուր ծանրացնելով իրեն և դժվարացնելով սրտի աշխատանքը: Չնայած հակադրված իսկական պահեցողությունը նպաստում է մարմնի ճարպերը հալեցնելուն և սրտի աշխատանքը թեթևացնելուն: Սակայն երբ պահեցողությունը նիհարելու և առողջությունը վերագտնելու նպատակով է արվում, որքան էլ օգտակար լինի, դադարում է կրոնական արժեք ունենալուց: Պահքի անուղղակի բարիքներից մեկն էլ կամքի զորացումն է: Մեր հոգևոր և բարոյական կենցաղում կամքը կենսական դեր ունի: Երբ օրենքի պարտադրանքով կամ մեր ցանկությամբ պահեցողություն ենք անում, մեր կամքն աստիճանաբար զորանում է, որովհետև պահեցողությունը հաճելի չէ մեր ֆիզիկական դյուրակեցությանը, որով մարմնական հակումների վրա դրված պարտադրանքը նպաստում է, որ բարոյական կամեցողությունը զորանա՝ ի վերջո դառնալու համար ուժի շտեմարան, որի օգնությանն ենք դիմելու ամեն անգամ, երբ բարոյական օրենքներին կամ մեր խղճմտանքին հակառակ արարքների փորձությանը ենթարկվենք: Կամեցողության զորացմամբ մենք մեր ունեցած խելքը և ժամանակն ավելի արդյունավոր կերպով կարող ենք օգտագործել: Թե կամքի պակասի հետևանքով ինչ ահավոր չափերի հասնող վատնումներ ենք ունենում՝ քչերին է հայտնի: Սակայն ևս մեկ անգամ կրկնենք. միայն կամքի զորացման համար կատարված պահեցողությունը կամ նման այլ վարժանքներն ու մարզանքները զուրկ են մնում զուտ կրոնական արժեքից՝ ինքնըստինքյան օգտակար ու հանձնարարելի լինելով հանդերձ:

Կերակրատեսակների պահեցողությունից ոչ պակաս կարևոր է նաև բարոյական պահեցողությունը, որը խրախուսելի է ոչ միայն պահքի օրերին, այլև ամբողջ կյանքում:

Բարոյական պահեցողություն է բոլոր տեսակի մոլություններից, վատ սովորություններից ու չար գործերից հրաժարվելը, և դրան զուգահեռ բարիք գործելը:

Պահքի մասին մեր այս խորհրդածություններն ավարտենք Եսայի մարգարեի գրքից սքանչելի մի հատվածով, ուր Աստված մարգարեի բերանով հայտնում է, թե ինչպիսին է Իր ցանկացած պահքը: Այս հատվածում նախ Աստծո ժողովուրդն է, որը գանգատի ձևով հարց է տալիս Աստծուն.

- Այդ ինչպե՞ս է, որ մենք ծոմ պահեցինք, և Դու չտեսար, զրկանքների ենթարկեցինք մեզ, և Դու չիմացար:

Աստված պատասխանում է.

- Որովհետև ձեր պահքի օրերին ձեր ցանկություններն եք կատարում և կսկիծ պատճառում բոլորո նրանց, ովքեր ենթակա են ձեզ:

Հակառակության և կռիվների մեջ եք պահում և բռնցքահարում տկարին: Իսկ Իմ ինչի՞ն է պետք այդպիսի պահքի օրը. դուք պիտի գաք բողոքեք Ինձ, և Ես չպիտի լսեմ ձեզ: Այդպիսի՛ պահքը չէ, որ Ես ընտրեցի, և ոչ էլ այնպիսի օրը, երբ մարդն իր անձն է տանջում: Եթե պարանոցդ կորացնես օղակի նման ու տակդ քուրձ ու մոխիր տարածես, այդ էլ, սակայն, չեմ համարի պահք և ընդունելի օր. այդպիսի՛ պահքը չէ, որ Ես ընտրեցի,- ասում է Տերը:

Բոլորիդ մաղթում ենք Բարի և օրհնաբեր պահոց օրեր:

Արթուր կարկ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Արցախի Թեմի ՔԴՔԿ
փոխտնօրեն

ԽՆԴԻՐ

ԸՆՏՐԵՔ ԻՆՔՆԵՐԴ

Գտնվելով մայրաքաղաքում կամ շրջաններում, ուզենք թե չուզենք, միշտ հանդիպում ենք շների: Մե՛րթ մայթերին, մե՛րթ աղբամանների կողքին կամ մեջ, մե՛րթ խաղահրապարակներում, մե՛րթ զբոսայգում, իսկ երբեմն էլ ոհմակով են հանդիպում, երբ շներից մեկը գլխավորն է ու քայլում է սկզբից, իսկ մյուսները՝ նրա հետեւից: Թափառող շները մեծ վտանգ են ներկայացնում հասարակության համար, հատկապես եթե վարակված են «Կատաղություն» հիվանդությամբ Թափառական են այն շները, որոնք երբեւէ տեր չեն ունեցել կամ փողոցներում են գտնվում առանց տիրոջ ուղեկցության, որը պատասխանատու է իր շան վարքի համար:

Միտում կա, որ շուն պահելը մտել է առօրյա պարտադիր գործերի մեջ: Բայց կարծես հաշվի չէ առնված, որ միգուցե կան մարդիկ, որոնք չեն ցանկանում շների միջավայրում գտնվել. արդյոք չե՞ն խախտվում նրանց իրավունքները: Դուրս ես գալիս փողոց թե չէ, իսկույն պատահում ես տարբեր տեսակի եւ չափի շների, բարեբախտաբար՝ իրենց տերերի կամ տիրուհիների հետ: Սակայն որոշ դեպքերում, տեսնելով տիրոջ կազմվածքը եւ շան ահռելի չափերը, շտապում ես լքել տարածքը, քանի որ տիրոջ ծեռքին երկաթյա թոկը վստահություն չի ներշնչում, որ շան փախչելու դեպքում տիրոջն էլ հետը չի քաշքշի: Խոսեցնես՝ բոլոր նորմերը պահպանված են. շունը մաքուր է, պատվաստված է, չի կծում, վախենալու չէ: Խախտումներն էլ շատ են: Այնտեղ, որտեղ զգուշացնող նշան կա, որ շների հետ այդ տարածք մտնել չի կարելի, մտածում ես՝ նստես գոնե մի քիչ վայելես, տեսնում ես, որ նշանին ուշադրություն դարձնող չկա, շներ կան հերիք չէ, այն էլ այն շները, որոնք պետք է դնչակալ կրեն հասարակական միջավայրում, բայց առանց դնչակալի են: Հետաքրքիր է՝ տուգանք սահմանվա՞ծ է եւ եթե այո, ապա հետեւող կա՞ դրան:

Վերադառնանք թափառական շներին: Երկար մտածում էի, թե ինչպես վերնագրեմ հոդվածս. «Գովեստի արժանի արարք», «Մարդկանց պաշտպանելը՝ հոգեկերտվածք», «Մայրաքաղաքի կենտրոնական փողոցում կանխվել է երեխայի վրա շան հարձակման փորձ», թե՞ «Կեցցեն թափառական շները» կամ «Ցնդած մարդիկ»: Ընտրեք ինքներդ:

«Լուսարար»-ի ընթերցողները ծանոթ են ԱՀ ԿԳՄՍՆ աշխատակից, ՊԲ պահեստազորի սպա, սեւ գոտի առաջին դան կիոկուշին կարատեի մարզիչ Արմեն Պետրոսյանի հետ: Փետրվարի 15-ին ժամը 18:30-ի սահմաններում Արմեն Պետրոսյանը մարզական հերթական պարապմունքին գնալիս 1-ին դպրոցի ճանապարհին նկատում է, որ շուն է հաչում ու վազում մի աղջնակի հետևից, որը հարձակումից խուսափելով՝ հայտնվել էր ընդհանուր ճանապարհի երթեւեկելի մասում: Արմենը հասցրեց նետվել ճանապարհ, ավտոմեքենաների համար փակելով ճանապարհը՝ երեխային գրկեց ու դուրս հանեց մայթ: Երեխային գրկած վիճակում նրան հաջողվել էր որոշ հրահանգներով եւ շարժումներով շանը հեռացնել: Աղջնակը շուրջ տասը րոպե լացում էր, վախից չէր կարողանում խոսել: Արմենը նրան տարել էր մոտակա խանութ, ջուր տվել, հանգստացրել, օգնել նաեւ հոգեբանորեն, իսկ երբ արդեն կարողացել է խոսել, հարցրել է տան տեղը եւ ուղեկցել նրան իրենց տուն: Համոզվելով, որ երեխան տանն է ու ապահով՝ վերադարձել է պարապմունքի: Քիչ հետո սոցիալական կայքերից մեկում գրառում էր կատարել, որ թափառական շները վտանգ են ներկայացնում քաղաքացիների համար, օրինակ բերել կատարվածը եւ կոչ արել ոստիկանությանը թափառող շներին վնասազերծելու համար կազմակերպել անհրաժեշտ միջոցառումներ: Գրառումը տեսնելով՝ երեխայի հայրը հասկացել էր, որ խոսքն իր աղջկա հետ կատարվածի մասին է, հարցուփորձ է արել, գտել Արմենին եւ շնորհակալություն հայտնել երեխային փրկելու համար: Երեխան արդեն լավ էր զգում իրեն:

Երբ տեսա Արմենի գրառումը, հուզվեցի ուրախությունից, որ մեր տղամարդիկ իսկական տղամարդ են, եւ չենք կորցրել իսկական հայ տղամարդու կերպարը: Սա առաջին միտքն էր, որ անցավ գլխովս: Հետո ուրախացա, որ երեխային բարեբախտաբար ֆիզիկական վնաս չի հասել: Ոգեւորվեցի, որ հարցի շուրջ մտահոգություն կա եւ անհրաժեշտ է վնասազերծել թափառական շներին:

Բարեբախտաբար ողբերգական դեպքեր չեն եղել կամ միգուցե հայտնի չեն: Բայց մի՞թե պետք է դժբախտ պատահարներ լինեն, որպեսզի թափառական շների նկատմամբ միջոցներ ձեռնարկվեն: Իսկ երբ մտահոգություն ենք բարձրացնում, մեզ հրամցնում են «Շունը մարդու ընկերն է» լոզունգը: Լավ, եթե ոչ մի բան հնարավոր չէ անել, միգուցե դասընթացնե՞ր կազմակերպել երեխաների, ինչու չէ, նաեւ մեծերի համար, թե ինչպես իրենց պահեն, երբ փողոցում շուն են տեսնում, ինչպես կանխել նրա հարձակումը: Դա էլ է մնացել ընդամենը որպես հարց, քանի որ չգիտենք, թե ով կամ ովքեր պետք է դրանով զբաղվեն:

Արեւածագին մարզվում էի մեր պատշգամբին: Մարզանքս մի պահ ընդհատվեց «ՈՒԱԶ» մակնիշի ավտոմեքենայի (հավանաբար՝ ոստիկանական) ուժեղացված արագության ձայնից, կրակոցից եւ շան ոռնոցից: Շենքի մոտ տեղադրված աղբամանների մոտ կանգնեց մեքենան, դուրս եկավ համազգեստով տղամարդ՝ ցանցը ձեռքին... Տեսարանը դիտարժան չէր: Չեմ կարող ասել՝ քնեցրե՞լ, թե սպանել էին, բայց երկու դեպքում էլ այնքան ցնցող չէր տեսարանը, որքան՝ վախից խուճապահար վազող երեխայի լացն ու նրան մեր հայրենակցի գիրկն առնելը:

Նախքան Արմենին անձնական նամակ գրելս ու դեպքի մասին հարցազրույց խնդրելս ուշադրությունս գրավեցին այդ գրառման տակ տեղ գտած բազմաթիվ մեկնաբանությունները: Մինչ բացվում էր, մտածում էի, որ Արմենը ճանաչված անձ է, հավանաբար, շատերն են ուզում մանրամասներ իմանալ, թե ինչ եղավ, ինչպես եղավ, եւ շնորհակալություն հայտնել նրան: Բայց սխալվեցի: Մեկնաբանությունների տարափը ամենեւին էլ դրական չէր, բացառությամբ որոշ մարդկանց գրառումների, որոնք շնորհակալություն էին հայտնում եւ համակարծիք էին կոչի հետ: Աղջնակին փրկած, անչափահաս երեխաների հայր, փորձառու մարզիչ եւ Հայոց բանակի պահեստազորի սպա Արմեն Պետրոսյանին մեկնաբանություններում մեղադրեցին սպանդի մեջ. հնչեցին վիրավորանքներ, որ տգետ են ու աճելու տեղ ունեն: Թեման քաղաքականացվեց: Կարծիք հնչեց, որ «30 տարի սպանել ենք, դրա համար էլ այս օրին ենք հասել: Ստեփանակերտում մի՞թե ուրիշ ավելի կարեւոր հարց չկա լուծելու»: Իսկ ի՞նչը կարող է երեխաների անվտանգությունից ավելի կարեւոր լինել: Թուրքիան օրինակ բերվեց, որ այնտեղ շատ քաղաքակիրթ են, շուն չեն սպանում: Օրինակ բերվեց համացանցից վերցրած շան նկարը, որը փլատակներից գտնում է մարդկանց, եւ հորդորվեց, որ գոնե դրան նայի Արմենը...

Արմենի վրա հարձակված շնասերներն ու շնապաշտները միգուցե հենց այն մարդիկ են, որոնք թողել են իրենց շներին պատերազմի ժամանակ, մատնել սովի, դարձրել անտուն, հետո էլ չեն կարողացել իրենց ներել, համենայն դեպս, առաջարկում են անտուն շների համար կացարաններ կամ շնաբուծարաններ ունենալ եւ բոլոր շներին պահել այնտեղ, ուղղակի գումար հատկացնող չկա:

Մեկնաբանություններին չէի անդրադառնա, եթե դրանց հեղինակները միայն այսպես կոչված «ֆեյքեր» լինեին: Բայց երբ իր քննադատող խոսքն է ասում ճանաչված մանկավարժը, սկսում ես կասկածել, արդյոք ճի՞շտ են ընկալվում մեր արժեքները, թե՞ իրական արժեքների խեղաթյուրման եզրին ենք:

Տիկին մանկավարժը դիմում է Արմեն Պետրոսյանին. «Ձեր մասնագիտական պարտքն է երեխա փրկելը: Պետք է սովորեցնեք նրան սիրել եւ պաշտպանվել, ոչ թե նման կոչեր անեք: Պետք է սեր սերմանեք երեխաների մեջ դեպի բնությունը եւ արվեստը, իսկ սերը միշտ փոխադարձ է լինում»: Դրան հետեւում են այլ մարդկանց կարծիքներ, որ ճի՛շտ է, եթե հասարակությունը հիվանդ չլինի, սիրի կենդանիներին, դրանք էլ իրեն կսիրեն, որ շատ դեպքերում ծնողներն են մեղավոր, որ ներշնչում են երեխային, թե շներից պետք է վախենալ: Իսկ տիկին մանկավարժն ամփոփում է, որ սպորտի իմաստը բա էլ ո՞րն է, եթե պետք է վախենան շներից...

Ի՞նչ մասնագիտական պարտքի մասին է խոսքը: Եթե ծանոթ եք Արմեն Պետրոսյանի զինվորական ուղուն եւ նկատի ունեք նրա սպա լինելը, ապա առանց Ձեր հիշեցման էլ նա եղել եւ մնում է պատերազմով անցած լավագույն մարտիկներից մեկը, որն ընդունակ է պաշտպանելու եւ փրկելու ոչ միայն չորքոտանի կենդանիներից, այլեւ «երկոտանի չարիքից»: Մեզանից ոչ մեկը նրան մեղադրելու կամ քննադատելու բարոյական իրավունքը պարզապես չունի: Ոչ մի անօրեն կամ բարոյական սկզբունքները զանց առնող կոչ չի հնչել նրա կողմից: Ինչպես ցանկացած ծնող, այնպես էլ Արմեն Պետրոսյանը մտահոգված է իր եւ մյուս երեխաների անվտանգությամբ, եւ դիմում է ոստիկանությանը հարցին պատշաճ լուծում տալ:

Հնարավորությունն օգտագործում եմ՝ եւս մեկ անգամ շնորհակալություն հայտնելու Արմեն Պետրոսյանին: Ուրախալի է, որ Ձեզ նման տղամարդիկ կան մեր շուրջը: Միանում եմ կոչին եւ խնդրում պատկան մարմիններին անհապաղ միջոցներ ձեռնարկել թափառական շներին վնասազերծելու համար, քանի դեռ ավելի սարսափելի դեպքեր տեղի չեն ունեցել:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՓԱՍՏԵՐ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ

Մեզանից յուրաքանչյուրն այսպես թե այնպես կապված է սպորտի հետ. մեկը մարզվում է տնային պայմաններում, մյուսը՝ պրոֆեսիոնալ մակարդակով, իսկ ոմանք էլ հետեւում են մարզական լուրերին եւ կողքից հետաքրքրվում մարզիկների ձեռքբերումներով: Այնուամենայնիվ, կան հարցեր, որոնք դեռ հանելուկ են մնում շատերի համար: Համացանցի օգնությամբ պարզաբանեցինք որոշ արդիական հարցեր ու վերհանեցինք հետաքրքիր փաստեր:

Ինչո՞ւ օլիմպիական օղակներն ունեն հենց այդ գույները: Միավորված օղակներն ընդհանուր առմամբ խորհրդանշում են հինգ մայրցամաքների միավորումը, աշխարհի բոլոր մասերի միությունը եւ Օլիմպիական խաղերի համաշխարհային բնույթը: Իսկ գույները տարբեր տարերքների խորհրդանիշն են. կապույտը՝ ջուր, կարմիրը՝ կրակ, դեղինը՝ հողի էներգիան, սեւը՝ մետաղի էներգիան, կանաչը՝ ծառի էներգիան:

Ինչպե՞ս են գեղալողով զբաղվողները լսում երաժշտությունը ջրի տակ: Որպեսզի ցուցադրական ելույթների ժամանակ գեղալողորդները չխախտեն ծրագիրը եւ կարողանան լսել երաժշտությունը նաեւ ջրի մեջ, լողավազանում տեղադրվում են հատուկ ստորջրյա դինամիկներ: Իհարկե, ջրի խտության պատճառով ձայնն այնքան էլ լավ չի լսվում, բայց դա օգնում է լողորդներին լսել գոնե ռիթմը ու ժամանակին կատարել ծրագրի տարրերը:

Իրակա՞ն է, արդյոք, Քրիշտիանու Ռոնալդուի ազգանունը: Իրականում «Ռոնալդու»-ն ազգանուն չէ, այլ՝ անուն: Դրանով լրացվել է Քրիշտիանուի անունն ի պատիվ ԱՄՆ նախագահ Ռոնալդ Ռեյգանի, որը մինչ այդ դերասան էր: Ֆուտբոլիստի հայրը շատ էր սիրում նրա մասնակցությամբ ֆիլմերը: Այսինքն՝ Քրիշտիանու Ռոնալդուն երկակի անուն է, իսկ ֆուտբոլի աստղի լրիվ անունը Քրիշտիանու Ռոնալդու դուշ Սանտուշ Ավեյրու է:

Ի՞նչ է սպիտակ փոշին, որով շփում են իրենց ձեռքերը մարմնամարզիկները: Շատերը սխալմամբ ենթադրում են, թե ելույթից առաջ նրանք շփում են իրենց ձեռքերն ալյուրով, բայց դա այդպես չէ: Մագնեզիումի փոշին մաքրում է ձեռքերը նույնիսկ չնչին թացությունից, որով էլ օգնում է լավացնել մարզագործիքին հպվելը:

Ո՞րն է ամենաթանկարժեք մարզաձեւը: Ամենից շատ ծախսեր պահանջող մարզաձեւ է ճանաչվել օղակաձեւ ավտոմրցույթ «Ֆորմուլա-1»-ը: Հայտնի է, որ «օդաչուներն» ստանում են շատ մեծ հոնորարներ, սակայն նախապես իրենք էլ ներդնում են մեծ ուժեր եւ ֆինանսներ: Ընդ որում, ոչ միայն սարքի վրա են ներդրում կատարում, այլեւ դրա սպասարկման վրա:

Ինչո՞ւ ֆուտբոլի գնդակն ունի սեւ-սպիտակ գունավորվածություն: 1970թ., երբ հեռուստացույցները դեռ սեւ-սպիտակ էին ցույց տալիս,

ֆուտբոլային խաղերն արդեն հեռարձակվում էին ուղիղ եթերով: Վառ գույների ֆոնին, որոնք էկրանների վրա մոխրագույն էին երեւում, սեւ-սպիտակ ֆուտբոլային գնդակը բավականին վառ էր եւ հստակ տարբերվում էր: Իսկ հետո ավանդույթը որոշել են պահպանել:

Սպորտը ոչ միայն առողջ ապրելակերպ է, այլեւ՝ մարզական սխրանքներ ու նվաճումներ: Սպորտը չի կանգնում տեղում, այլ շարժվում է առաջընթացի հետ: Նոր մարզաձեւեր են առաջանում, նոր մարզիկ-հերոսներ են ճանաչվում, նոր ռեկորդներ սահմանվում: Ամենահետաքրքիր եւ զարմանալի պահերն ընդմիշտ մնում են սպորտի պատմության եւ երկրպագուների հիշողության մեջ: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

☞12

ԼՈՒԾԱՐՎԵԼ ԵՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության 2022 թվականի
ապրիլի 21 -ի N436–Ն որոշման

Ց Ա Ն Կ
ԼՈՒԾԱՐՎՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/Հ	ՀԱՀՀ	Լուծարվող փակ բաժնետիրական ընկերություն կամ պետական ոչ առևտրային կազմակերպություն	Հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման կամ լիազորված պետական մարմինը
1.	90073803	Ասկերանի շրջանի «Ակնաղբյուրի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի վարչակազմ
2.	90073785	«Ավետարանոցի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
3.	90074255	«Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի Վ. Ջիվանշիրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
4.	90074308	«ՈՒՂՏԱՍԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
5.	90074316	«Ասկերանի շրջանի Մադաթաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
6.	90074383	«Ասկերանի շրջանի Ավետարանոցի Ի. Աթայանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
7.	90074609	Ասկերանի շրջանի «Սղնախի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
8.	90074881	«ՋՐԱՂԱՅՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
9.	90282957	«ԼՂՀ Հադրութի շրջանի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի վարչակազմ
10.	90282973	ԼՂՀ Հադրութի շրջանի «Դրախտիկի Վ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
11.	90282981	ԼՂՀ Հադրութի շրջանի «Մարիամաձորի Ն.Սայիյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
12.	90283006	ԼՂՀ Հադրութի շրջանի «Ջրակուսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
13.	90283014	ԼՂՀ Հադրութի շրջանի «Նորաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
14.	90283022	ԼՂՀ Հադրութի շրջանի «Ազոխի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
15.	90283049	ԼՂՀ Հադրութի շրջանի «Տումու Ս. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
16.	90283057	ԼՂՀ Հադրութի շրջանի «Ակնաղբյուրի Վ.Ամիրջանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
17.	90283065	ԼՂՀ Հադրութի շրջանի «Խանձաձորի Հ.Այվազյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
18.	90283073	ԼՂՀ Հադրութի շրջանի «Առաքելի Ս.Սեյրանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
19.	90283081	ԼՂՀ Հադրութի շրջանի «Արևշատի Մ.Զաքարյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
20.	90283118	ԼՂՀ Հադրութի շրջանի «Հակակվի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
21.	90283126	ԼՂՀ Հադրութի շրջանի «Քյուրաթաղի Գ. Գասպարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
22.	90283134	«Այգեստանի Ա. Բալայանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
23.	90283142	ԼՂՀ ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ «ՏՈՂԻ Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
24.	90283169	ԼՂՀ Հադրութի շրջանի «Վարդաշատի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
25.	90283177	ԼՂՀ Հադրութի շրջանի «Թաղասեռի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
26.	90283193	ԼՂՀ Հադրութի շրջանի «Առաջամուղի Զ.Եսայանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
27.	90283203	ԼՂՀ Հադրութի շրջանի «Թաղոտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
28.	90283211	ԼՂՀ Հադրութի շրջանի «Խծաբերդի Վ.Գրիգորյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
29.	90283238	ԼՂՀ Հադրութի շրջանի «Բանաձորի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
30.	90283254	ԼՂՀ Հադրութի շրջանի «Մոխրենեսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
31.	90283262	ԼՂՀ Հադրութի շրջանի «Հին Թաղերի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
32.	90283289	ԼՂՀ Հադրութի շրջանի «Մեծ Թաղերի Խուդյակովի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
33.	90283297	ԼՂՀ Հադրութի շրջանի «Ուխտաձորի Ա.Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
34.	90283598	ԱՀ ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ «ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
35.	90282501	«Առաքելի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
36.	90214695	«Հադրութի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
37.	90282416	«Ազոխի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
38.	90282853	«Դրախտիկի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
39.	90282097	«Հադրութի Ավ. Իսահակյանի անվան շրջանային կենտրոնական գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
40.	90282776	«Հադրութի մշակույթի և երիտասարդության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
41.	90282595	«Միջագետ» փակ բաժնետիրական ընկերություն	
42.	90144174	ԼՂՀ Մարտակերտի շրջանի «Մատաղիսի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի վարչակազմ
43.	90144115	ԼՂՀ Մարտակերտի շրջանի «Թալիշի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
44.	90144837	ԼՂՀ Մարտակերտի շրջանի «Թալիշի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
45.	90144914	ԼՂՀ Մարտակերտի շրջանի «Մատաղիսի Ակ. Ռադիկ Մարտիրոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
46.	90145014	ԼՂՀ Մարտակերտի շրջանի «Նոր Կարմիրավանի Յակով Գալստյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
47.	90145065	ԼՂՀ Մարտակերտի շրջանի «Նոր Մարաղայի Վագիֆ Համբարձումյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
48.	90145073	ԼՂՀ Մարտակերտի շրջանի «Նոր Սեյսուլանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
49.	90145118	ԼՂՀ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ «ՆՈՐ ԱՅԳԵՍՏԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
50.	90145169	ԼՂՀ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ« ՆՈՐ ՀԱՅԿԱՁՈՒՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
51.	90214378	ԼՂՀ «Մարտունու շրջանի Սարգսաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի վարչակազմ
52.	90214412	ԼՂՀ «Մարտունու շրջանի Թաղավարդի Ա.Գրաշու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
53.	90214447	ԼՂՀ «Մարտունու շրջանի Շեխերի Նիկողոս և Հերմինե Նիկողոսյանների անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
54.	90214498	ԼՂՀ «Մարտունու շրջանի Վազգենաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
55.	90214575	ԼՂՀ «Մարտունու շրջանի Ջիվանիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
56.	90214679	ԼՂՀ «ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՃԱՐՏԱՐԻ ՀՐԱՅՐ ՀԱՄԼԵՏԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 5 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
57.	90342881	Շուշիի շրջանի «Քարին տակի Հ. Ղարախանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Արցախի Հանրապետության Շուշիի շրջանի վարչակազմ
58.	90342857	Շուշիի շրջանի «Քիրսավանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
59.	90342599	«Քարին տակի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
60.	90341923	«Շուշիի կենտրոնական գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
61.	90342617	«Շուշիի մշակույթի և երիտասարդության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
62.	90036534	«Շահումյանի շրջանի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի վարչակազմ
63.	90036577	«Քարվաճառի Վ. Սարոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
64.	90036843	«Եղեգնոտի Պ. Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
65.	90036904	«Ծարի Սպարապետ Վ. Սարգսյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
66.	90037098	«Զուարի Ն.Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
67.	90036731	«Նոր Բրաջուրի Ս.-Ս. Էրումյանների անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
68.	90036886	«Դադիվանքի Ա.Արմենակյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
69.	90036947	«Նոր Ղարաչինարի Ա.Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
70.	90036723	«Նոր Վերինշենի Ջ. Ջալավյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի վարչակազմ
71.	90036758	«Նոր Գետաշենի Վ. Նազարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
72.	90036782	«Նոր Մանաշիդի Հ.Վարդանյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
73.	90036827	«Հավսաթաղի Շ.Սարգսյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
74.	90036835	«Նոր Էրքեջի Հ. Զառահյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
75.	90036851	«Նոր Խարխափուտի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
76.	90036939	«ՔՆԱՐԱՎԱՆԻ Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
77.	90018422	«Շահումյանի «Խաչեն» մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
78.	90009406	«Եղեգնոտի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
79.	90009406	ԼՂՀ Շահումյանի շրջանի «Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
80.	90030477	«Շահումյանի մշակույթի և երիտասարդության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
81.	90018105	«Նոր Շահումյան» փակ բաժնետիրական ընկերություն	

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՃՈՒՐԴ-ՄՐՑՈՒՅԹ

«Սնանկության մասին» ԱՀ օրենքի 89-րդ հոդվածի համաձայն՝ 2023թ. մարտի 15-ին ժամը 12:00-ին «Մայակ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա. Խաչատրյանի կողմից, ԱՀ ԸԻ առաջին ատյանի դատարանի՝ Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների 42 հասցեում հայտարարվում է դասական եղանակով աճուրդ-վաճառք՝ հետևյալ լոտերով.

Լոտ 2- Հարիչ(միքսեր)՝ Steno PL60L/3VP 1հատ, 2 հատ ամանով՝ 60 լիտր, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 440 320 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Կրեմի սրսկիչ՝ DE DANIELI RMP83 15լիտր, 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 153 600 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Խմորի գնդեր սարքող սարք՝ RAM S30 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **409 000** ՀՀ դրամ:

Լոտ 5 - Խմորհարիչ՝ K-M130 130կգ 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 512 000 ՀՀ դրամ:

Լոտ 6 - Վառարակ՝ Bassanina zoom 1212 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է անաշխատունակ վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 1 024 000 ՀՀ դրամ:

Լոտ 7- Դարակաշար ռատացիոն վառարանի համար՝ 50x70սմ (18դարակ) 7 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 143 360 ՀՀ դրամ:

Լոտ 8 - Խմորի գնդեր բացող սարք՝ Kemplex SF600/1400 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնակային գինը կազմում է 358 400 ՀՀ դրամ:

Լոտ 9 - Դարակաշար թիթեղներով ռատացիոն վառարանի համար՝ 60x80 սմ (18դարակ) 7 հատ, մետաղյա թիթեղներ (դարակ) 72հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 216 064 ՀՀ դրամ:

Լոտ 10 - Դարակաշար թիթեղներով ռատացիոն վառարանի համար՝ 60x80 սմ (18դարակ) 18 հատ, մետաղյա թիթեղներ (դարակ) 108հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 516 096 ՀՀ դրամ:

Լոտ 11 – Խմորհարիչ՝ EFFEDUE KG.160 160կգ 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 665 600 ՀՀ դրամ:

Լոտ 12 – Խմորի հասունացման խցիկ՝ 294x204x200սմ չափսի, պատերը՝ ինքնաշեն, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 460 800 ՀՀ դրամ:

Լոտ 13 - Վառարակ՝ Bassanina rotor 57 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է անաշխատունակ վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ: Գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 1 024 000 ՀՀ դրամ:

Լոտ 14 - Թիթեղյա դարակներ՝ 150հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 76 800 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ ՖԱ դեպքում անձնագրի պատճենը, իսկ ԻԱ դեպքում՝ պետական գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթերը: Նախավճարը կազմում է մեկնարկային գնի 5 տոկոսը, որը փոխանցվում է սնանկության հատուկ հաշվին՝ «Արցախբանկ» ՓԲԸ «Տիգրանակերտ» մ/ղ հ/հ 22301050288600:

Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդին նախորդող 5 օրվա ընթացքում, ընդհուպ մինչև աճուրդին նախորդող օրվա 16.00, կարող են հայտ ներկայացնել՝ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ մասնակցի վկայական ստանալու համար: Աճուրդում հաղթող է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Գնորդը կրելու է գույքի ձևակերպման, գրանցման և գույքահարկի պարտքերի վճարման պարտավորությունները: Մանրամասներին ծանոթանալու համար դիմել սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանին: Հեռ.՝ 097-22-29-22 կամ 043-08-17-33:

Սնանկության գործով
կառավարիչ՝ Ա.Խաչատրյան

ՍՆԱՆԿ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (Դատարան) 2023թ. փետրվարի 13-ի վճռով պատասխանող «ԱՆԱՐ» ՍՊԸ (ՀՎՀՀ 90034925, պետական գրանցման համար՝ 443.110.12109, հասցե՝ ԱՀ, ք.Ստեփանակերտ, փ. Վ.Սարոյան 5/26), ճանաչվել է սնանկ: Վճիռն օրինական ուժի մեջ է մտել 13.02.2023թ.:

Դատարանի 17.02.2023թ. որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել ա/ձ Արմեն Խաչատրյանը:

Պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են Դատարան սնանկության մասին այս հայտարարությունից մեկամսյա ժամկետում:

Պարտատերերի առաջին ժողովը նշանակված է 2023թ. ապրիլի 24-ին՝ ժամը 12:00-ին, Դատարանի շենքում (հասցե՝ ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42):

Սնանկության գործով
կառավարիչ՝ Ա.Խաչատրյան

ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (Դատարան) 2023թ. հունվարի 30-ի վճռով պատասխանող Յուրի Արմենի Դադայանը (անձնագիր՝ AT0624228 08.01.2021թ. 070-ի կողմից) ճանաչվել է սնանկ: Վճիռն օրինական ուժի մեջ է մտել 30.01.2023թ.:

Դատարանի 03.02.2023թ. որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել ա/ձ Արմեն Խաչատրյանը:

Պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են Դատարան սնանկության մասին այս հայտարարությունից մեկամսյա ժամկետում:

Պարտատերերի առաջին ժողովը նշանակված է 2023թ. ապրիլի 3-ին՝ ժամը 12:00-ին, Դատարանի շենքում (հասցե՝ ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42):

Սնանկության գործով
կառավարիչ՝ Ա.Խաչատրյան

ԱՀ ԸԻ դատարանի թիվ ԸԻԴ/0003/04/23 սնանկության գործով առ 03.02.2023 թ. վճռով Վալերի Վարտկեզի Դազարյանը ճանաչվել է սնանկ:

Դատարանի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել ա/ձ Արայիկ Արմենի Հակոբջանյանը:

Պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են Դատարան սնանկության մասին հայտարարությունից սկսած մեկամսյա ժամկետում:

Պարտատերերի 1-ին ժողովը նշանակված է 2023 թվականի ապրիլի 18-ին՝ ժամը 12:00-ին Ստեփանակերտ քաղաքի նստավայրում:

ԸԻԴ/0003/04/23
սնանկության գործով կառավարիչ
ա/ձ Արայիկ Հակոբջանյան

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՓԱՍՏԵՐ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ

10 ☜ - Բռնցքամարտն օրինականացվել է որպես մարզաձեւ միայն 1900 թվականին:

- Միակ երկիրը, որը մասնակցել է ֆուտբոլի աշխարհի բոլոր առաջնություններին Բրազիլիան է:

- Ամենատարածված մարզաձեւը կինեմատոգրաֆիայում բռնցքամարտն է:

- Հին Հունաստանում՝ Օլիմպիական խաղերի հայրենիքում, բոլոր մասնակիցները սահմանում էին իրենց ռեկորդներն առանց հագուստի, մերկ:

- Հակառակ հայտնի թյուրիմացության՝ ձյուդոյում ոչ թե 10 դան է, այլ՝ 12: Ճիշտ է, 11-րդ դանին ոչ մեկը չի արժանացել, իսկ 12-րդը շնորհվել է միայն մեկ մարդու՝ ձյուդոյի հիմնադիր Ջիգարո Կանոյին:

- Պրոֆեսիոնալ ռինգում ունեցած 51 մարտից 21-ը Մայք Թայսոնն ավարտել է նոկաուտով առաջին ռաունդում:

- Սեղանի թենիսի խաղի գնդակի զանգվածը 2,5 գրամ է:

- Պրոֆեսիոնալ վոլեյբոլիստի հարվածից հետո գնդակը կարող է թռչել մինչեւ 130 կմ/ժ արագությամբ: Իսկ հոկեիստի հարվածի օգնությամբ տափօղակը կարող է ունենալ մինչեւ 160 կմ/ժ արագություն:

- Հետազոտությունների համաձայն՝ պրոֆեսիոնալ հոկոիստների 68 տոկոսը սառույցի վրա կորցրել է առնվազն մեկական ատամ:

- Ֆիզկուլտուրան եւ խելացի դիետան ուղղակի փրկում են ճարպակալությունից:

- Հայտնի ֆիզիկոս Նիլս Բորը Դանիայի հավաքականի դարպասապահն էր:

- Մեծահասակ մարդկանց համար ամենաօգտակար մարզաձեւերից են թենիսը, բադմինտոնը, լողը, մարմնամարզությունը:

- Ակտիվ մարզական պարապմունքները դրական են անդրադառնում տղամարդկանց եւ կանանց սեռական առողջության վրա:

- Շախմատում առաջին 10 քայլում խաղի համար կա 170 000 000 000 000 000 000 000 000 ճանապարհ:

- Ամենաբարձրահասակ բասկետբոլիստն աշխարհում կենտրոնային խաղացող Սուն Մինմինն է Չինաստանից՝ 236 սմ/152 կգ:

- Ինչքան շատ ենք շարժվում, այնքան լավ է աշխատում մեր հիշողությունը:

- Սպորտը լավագույն պրոֆիլակտիկան է այնպիսի հիվանդությունների, ինչպիսին են դեպրեսիան, դիաբետը եւ գլխուղեղի կաթվածը:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԿՈՐԵԼ Է

Ազերիների կողմից օկուպացված Ակնաղբյուր գյուղում մնացել է Մխիթար Գեորգիի Գասպարյանիի Ա 235648 համարի 8-րդ դասարանի վկայականը՝ տրված Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղի միջնակարգ դպրոցի կողմից 1999 թվականին:

Համարել անվավեր:

***

Նունե Վաչագանի Գրիգորյանի УВ-1 N 085587 դիպլոմը՝ «Ընդհանուր տեխնիկական առարկաներ՝ ֆիզիկա լրացուցիչ» մասնագիտությամբ՝ տրված Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի կողմից 1989թ.:

Համարել անվավեր:

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ:
Տպաքանակ՝ 1650:
Ստորագրված է տպագրության՝ 25.02.2023թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: